



ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 50 Մ<sup>3</sup> ՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ  
ՌԵԶԵՐՎՈՒԱՐԻ, ԵՐԿՈՒ ԿԱՊՏԱԺՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ Ա ԽՄԵԼՈՒ ՋՐԻ  
ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Պատվիրատու - ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ  
Նախագծային ընկերություն - ԲԻՄ Ինժեներինգ ՍՊԸ  
Պայմանագիր - N ԱՐԵՆԻՀ-ԳՀԽԾՁԲ-03/25

ԲԱԺԻՆ N1/3

ԲԱՑԱՏԱՐԱԿԱՆ ՄԱՍ,ԱԿՆ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐ



ԵՐԵՎԱՆ  
Հոկտեմբեր 2025



ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ ԱՌԻՆՋ;  
ՄԻԿՐՈՇՐՖԱՆ -1; 1/7



(+374)10 28 43 27  
(+374)94 48 48 43



E-mail: [info@bime.am](mailto:info@bime.am)  
[www.bime.am](http://www.bime.am)

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 50 Մ<sup>3</sup> ՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՌԵԶԵՐՎՈՒԱՐԻ, ԵՐԿՈՒ ԿԱՊՏԱԺՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ և ԽՄԵԼՈՒ ԶՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

Պայմանագիր N ԱՐԵՆԻՀ-ԳՀԽԾՁԲ-03/25

ԲԱԺԻՆ 1/3 - Բացատարական մաս,ԱԿՆ և Ծավալներ

ԲԱԺԻՆ 1/3 - Աշխատանքային գծագրեր

ԲԱԺԻՆ 1/3 - Նախահաշիվ

ԲԻՄ ԻՆԺԵՆԵՐԻԳ ՍՊԸ

Տնօրեն տ.գ.թ

Ա. Մկրտչյան

Նախագծի գլխավոր ինժեներ

տ.գ.թ ղոցենտ

Մ.Մկրտչյան

ԵՐԵՎԱՆ  
Հոկտեմբեր 2025

## Բովանդակություն

<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄՈՐԴ</b> .....	2
Նախագծի նախադրյալները և կազմը.....	4
Նախագծի հիմնական հայեցակարգը.....	5
Նախագծի ելակետային տվյալները.....	5
Ջրասպառողները.....	6
Ջրաղբյուրների ելքերը.....	6
Բնակլիմայական պայմանները.....	6
Գետդեզիական հետազոտություններ.....	6
Ինժեներաներկրաբանական պայմաններ.....	6
Խմելու ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակը.....	7
Նախագծային Ջրապահանջ.....	8
Նախագծային լուծումները.....	8
Կապտածներ.....	8
«Վերին ուլնոց» և «Գուսանի» աղբյուրների ջրագծեր.....	9
Ջրագծերի թաղման խորությունները.....	9
Ջրամատակարարման համակարգի ռեզերվացիան.....	10
Ռեզերվուար.....	10
Խողովակային արմատուրան.....	11
Ջրագծի կառուցման պահանջվող խողովակները.....	12
Փականային հորեր.....	12
Գործող ջրագծերի վերանորոգումը.....	13
Նախապատրաստական աշխատանքներ.....	13
Խրամուղու և փոստրակի մշակումը.....	13
Խրամուղու հետլիցքը.....	14
Բետոնային աշխատանքներ.....	15
Ամրանային աշխատանքներ.....	16
Ջրագծերի հավաքովի երկաթբետոնե հորեր.....	17
Խողովակաշարերի մոնտաժը.....	18
Պողպատե խողովակաշարի մոնտաժը.....	18
Պոլիէթիլենե խողովակաշարի մոնտաժ.....	20
Խողովակների տեղադրումը խրամուղիներում.....	21
Խողովակների հակակոռոզիոն պաշտպանությունը.....	21
Խողովակային արմատուրայի մոնտաժը.....	22
Ճնշումային Խողովակաշարերի և ռեզերվուարի փորձարկումը.....	23
Խողովակաշարերի լվացումը.....	24
Շինարարության կազմակերպման նախագիծ.....	25
Շինհրապարակ և կապալառուի պահեստային շինություններ.....	25
Գոյություն ունեցող մալուխները, խողովակաշարերը և կառուցվածքները.....	25
Կատարողական փաստաթղթերը.....	25
Սահմանված որակի ապահովում.....	25
Ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարումը շինհրապարակ.....	26
Նյութերի և միջոցների Տեստավորումը.....	26
Հիգիենայի պահանջների ապահովում.....	26
Հակահրդեհային անվտանգություն.....	26
Լուսավորություն և Ցանկապատում.....	26
Շինհրապարակի մաքրում.....	26
Գոյություն ունեցող կառուցվածքների վնասումը.....	27
Օգտագործված նյութերի շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետները.....	27
Օբյեկտի աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենաներ և սարքավորումներ.....	27





Ծածկված աշխատանքների ընդունումը.....	28
Շինարարական աշխատանքների կազմակերպման օրացուցային գրաֆիկ .....	28
Ծավալաթերթ .....	28
Լուսանկարներ.....	29
Աշխատանքների անվտանգության տեխնիկան.....	29
Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ.....	30

## Նախագծի նախադրյալները և կազմը

Վայոց ձորի մարզի Ռինդ գյուղի խմելու ջրի համակարգի արդիականացում ծրագրի իրականացման համար թիվ ԱՐԵՆԻՀ-ԳՀԽԾՁԲ-03/25 պայմանագրի շրջանակներում **ԲԻՄ Ինժեներինգ ՍՊ** ընկերության կողմից մշակվել է Ռինդ համայնքի խմելու ջրի համակարգի արդիականացման աշխատանքային նախագիծը (հետագայում ԱՆ): Նշված աշխատանքային նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել Արենի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից տրված նախագծման տեխնիկական առաջադրանքը և ելակետային տվյալները, ինչպես նաև աշխատանքային նախագծի փուլում մեր կողմից տեղում կատարված ուսումնասիրությունները և Պատվիրատուի հետ կայացած քննարկումների արդյունքում ընդունված որոշումները և կից համաձայնեցումները:

Աշխատանքային նախագծի սույն փաթեթը ներկայացվում է աշխատանքային 3 բաժիններով՝

**ԲԱԺԻՆ – 1/3 Բացատրական մաս,**

**Շինարարական արտադրության տեխնոլոգիան**

**Շինարարության կազմակերպման նախագիծ**

**Աշխատանքների անվտանգության տեխնիկան**

**Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ**

**ԲԱԺԻՆ – 2/3 Աշխատանքային գծագրեր,**

**ԲԱԺԻՆ – 3/3 Նախահաշիվ:**

## Ընդհանուր տեղեկություններ

Նախագծային տարածքը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Ռինդ գյուղում: Բնակավայրը հիմնականում կառուցապատված է մեկ-երկու հարկանի տներով և գտնվում է լեռնային գոտում, ծովի մակերևույթից 1320մ բարձրությունների վրա:

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը իրենից ներկայացնում է տիպիկ լեռնային մարզ՝ խիստ կտրտված ռելեֆով և տեղանքի բացարձակ նիշերի մեծ տարբերությամբ: Խմելու ջրի հիմնական աղբյուրը գյուղի հյուսիս արևմտյան մասում գտնվող Վարդենիսի լեռների ստորոտի աղբյուրներն են:

Գյուղի կենտրոնական ճանապարհը, որը միացնում է շրջկենտրոնին ասֆալտապատ է: Համայնքի բնակչությանը կապի և էներգամատակարարման ոլորտներում ծառայությունները մատուցվում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությունների միջոցով: Զրամատակարարման համակարգը շահագործվում է գյուղապետարանի կողմից: Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է:

Բնակչության թիվը – 1470 մարդ

Գյուղում գործում են.



Միջնակարգ դպրոց և մանկապարտեզ, մշակույթի տուն և գինու գործարան «Զարեհ»:  
**Ռինդ գյուղի ենթակառուցվածքները**

Ենթակառուցվածք	Նկարագրություն
Ճանապարհներ	- Ներհամայնքային փողոցները ասֆալտապատ, խճապատված գրունտային :
Ջրամատակարարում	Գոյություն ունի բաշխիչ ցանց: Ջրագծերը ստորգետնյա են, տեղակայված փողոցներում կանոնակարգված սխեմայով:

Ջրահեռացման ցանց	Կոյուղու կոլեկտոր առկա է դպրոցի համար: Մյուս հատվածներում այն բացակայում է:
Հեղեղատարների/ սելավատարների համակարգ	- Համակարգ գոյություն չունի:
Կեղտաջրերի մաքրման կայան	- Կոյուղու մաքրման կայան չկա:
Էլեկտրամատակարարում	- Գործում է հոսանքի հոսալի մատակարարում՝ անհրաժեշտ հզորություններով: Ցանցը անցնում է հենասյուններով փողոցային խառը դասավորությամբ:
Աղբահեռացում	- Հեռացումը կազմակերպվում է գյուղապետարանի կողմից: Աղբը տեղափոխվում է 2կմ հեռավորության աղբավայր:

#### Նախագծի հիմնական հայեցակարգը

Ռինդ գյուղի ջրամատակարարման համակարգի վերակառուցման համար այս ծրագրով ուղղված ներդրումների հիմնական նպատակներն են.

- Առանց կորուստների տեղափոխել և արդյունավետ բաշխել աղբյուրների ելքը;
- Բարձրացնել համակարգի հուսալիությունը;
- Ապահովել բնակչության ջրապահանջը:

Այս նպատակներին հասնելու համար լեռնային բարդ տարածքում գոյություն ունեցող համակարգը կարիք ունի վերակառուցման: Հարկ է առաջանում կառուցել խմելու ջրի կապտածներ, ռեզերվուար և վերանորոգել մայրուղի ջրագիծը:

Համակարգերի շահագործումը ճիշտ կազմակերպելու դեպքում այս ներդրումային ծրագրից հետո հնարավոր կլինի Ռինդ գյուղում ունենալ հուսալի ջրամատակարարում:

#### Նախագծի ելակետային տվյալները.

- Նախագծման առաջադրանքը՝ տրված Պատվիրատուի կողմից,
- Նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք)
- Նախագծային տարածքի կադաստրային քարտեզը,
- Ակտ Ռինդի գյուղի խմելու ջրի համակարգի վիճակի վերաբերյալ,
- Համայնքի ղեկավարի կողմից տրված տեղեկանքներ ջրամատակարարողների և ջրաղբյուրների ելքերի վերաբերյալ,
- Օբյեկտի ինժեներագեոդեզիական չափումներ
- Օբյեկտի ինժեներաերկրաբանական հետազոտությունների արդյունքները,
- Տեղեկանք աղբավայրի վերաբերյալ:



Նախագծի ելակետային տվյալները և հիմքերը բերված են Հավելվածում:

#### **Ջրասպառողները**

Համաձայն Ռինդ համայնքի ղեկավարի ներկայացրած տեղեկանքի գյուղի ջրասպառողներն են բնակչությունը, գինու գործարանը և ընտանի կենդանիները:

#### **Ջրաղբյուրների ելքերը**

Աղբյուրներից գյուղ եկող ջրի ելքը փոփոխական է և կախված է տարվա եղանակից: Գյուղապետարանի շահագործող խմբի կողմից տարիների ընթացքում իրականացված դիտարկումների արդյունքում գնահատվել են նաև «Գուսանի աղբյուր» և «Վերին ուլնոց» աղբյուրների ջրի ելքերի մեծությունները: Աղբյուրների ելքերը որոշվել են ծավալային եղանակով: «Վերին ուլնոց» աղբյուրի ելքը գարնանը միջին տարվա դեպքում հասնում է 1.6-2.5 լ/վրկ, իսկ ամառը ելքը նվազում է մինչև 0.45-1.0 լ/վ, իսկ «Գուսանի աղբյուրի» ելքը՝ գարնանը 2.2-3.5 լ/վ և ամռանը 1.0-1.3 լ/վ:

#### **Բնակլիմայական պայմանները**

Ըստ ՀՀՇՆ 22-01-24 Ռինդ գյուղը համարվում է լեռնային շրջան, շոգ ամառով և ցուրտ ձմեռով: Տեղանքի կլիմայական պայմանները բերված են ինժեներաերկրաբանական հաշվետվությունում: (հավելված՝ Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվություն):

Գրունտի սառեցման առավելագույն խորությունը «Վերին ուլնոց» աղբյուրի տարածքում կազմում է 50 սմ:

#### **Գեոդեզիական հետազոտություններ**

Ռինդ գյուղի ջրամատակարարման համակարգի աշխատանքային նախագծման համար իրականացվել է ինժեներա-գեոդեզիական աշխատանքներ եղանակային բարենպաստ պայմաններում: Գեոդեզիական հանութագրված տարածքները ընդգրկված են գյուղի վարչական սահմանում:

Հանութագրման համար օգտագործվել են տարբեր նշանակության գեոդեզիական սարքավորումներ՝ GPS համակարգեր, էլեկտրոնային տախեոմետրեր և այլն:

Կետերը իրենց կոորդինատների համաձայն տեղադրվել են տեղագրական և կադաստրային քարտեզների համադրման արդյունքում ստացված միացյալ քարտեզի վրա:

Կազմվել է տեղագրական քարտեզ ARMWGS կոորդինատային համակարգում, որի վրա նշվել են գեոդեզիական կետերը, ռելիեֆը (հորիզոնականներով, բարձրությունները նիշերով), ճանապարհները (ավտոմոբիլային, գրունտային), ջրագրական ցանցը, հողամասերի սահմաններ, համայնքների սահմաններ և այլն:

#### **Ինժեներաերկրաբանական պայմաններ**

Այս նախագծի շրջանակներում ինժեներա-երկրաբանական նկարագրությունը տրվում է տվյալ լարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղադնություն, ակնադիտարկման եղանակով, ինչպես նաև հարակից տարածքներում կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ: ( հավելված՝ Ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների հաշվետվություն)

Առանձնացվել են բնահողի երեք հիմնական կտրվածքներ, որոնց նկարագրությունը և հիմնական ֆիզիկա-մեխանիկական ցուցանիշները բերվում են հաշվետվությունում:

Ելնելով խողովակների թաղման խորությունից նախագծվող ջրագծերի ուղեգծերում



տարածված բնահողերի երկրաբանական-լիթոլոգիական կտրվածքների նկարագրությունը տրված է մակերևույթից 1մ և 2մ ընկած խորությունների համար, իսկ ռեզեվուարինը՝ 4մ:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Հաշվի առնելով շրջանի ըստ բարդ երկրաբանական կառուցվածքն ու բնահողերի տեղադրման պայմանների ընդգծված առանձնահատկությունները, բացառված չէ, որ շինարարության ընթացքում բացված խրամուղիների որոշ հատվածներում բնահողերի մշակման խմբերը (կարգերը) չհամապատասխանեն նախագծայինի հետ: Նման դեպքերում երկրաբանական եզրակացության մեջ բնահողերի կարգերը կճշտվեն ինչպես բարձրացման այնպես էլ իջեցման ուղղությամբ, հիմք ընդունելով փաստացի քանդված փոսորակի և խրամուղու տվյալները:

#### **Խմելու ջրամատակարարման համակարգի տեխնիկական վիճակը**

Ռինդ գյուղի ջրամատակարարման համակարգը չի գտնվում ՀՀ-ում գործող ջրամատակարարման շահագործող ընկերության սպասարկման ոլորտում: Այն շահագործվում է համայնքապետարանի կողմից: Ջրամատակարարման ցանցը փակուղային է, երկարությունը 8.2 կմ: Գյուղի ջրամատակարարումը իրականացվում է հյուսիսային մասի բարձունքին տեղակայված է 250մ3 ծավալով ռեզերվուարից, որում նախատեսված է նաև հակահրդեհային ջրի ծավալ: (հավելված՝ տեղեկանքներ)

Գյուղի խմելու ջրի աղբյուրները գտնվում են Վարդենիսի լեռների հարավային լանջերին, 2300մ բարձրության վրա, որտեղ հրաբխային ապարներում ներծծված ջրերը դուրս են գալիս ցրված աղբյուրների ձևով:

Աղբյուրների վրա կառուցված երեք առանձին կապտաժներից ջրերը պողպատյա խողովակներով ինքնահոս հոսում են ներքև և մետաղական հորում խառնվում իրար: Հորից սևիզը է առնում գյուղ իջնող ՊԷ d160մմ ստորգետնյա խողովակաշարը, որին միանում է նաև ստորոտի ևս մեկ աղբյուր:

Միագիծ ՊԷ ջրատարը, որն անցնում է լեռնային քարքարոտ ու բարդ ուղեգծով ունի 15.4մ երկարություն:

Կապտաժների d57x3.5մմ ջրագծերը տեղակայված են վերգետնյա, հողից 20-30.1մ բարձրության մետաղական հենարանների վրա: Տարիներ առաջ կառուցման ժամանակ խողովակների վրա միներալային բամբակով իրականացված ջերմամեկուսացումից միայն հետքեր են մնացել:

Այդ ջրագծերի տարբեր հատվածների վրա ջրի սառեցման հետևանքով հաճախակի են առաջանում 5-10մմ լայնության վթարային ճաքեր, որոնք ամեն տարի վերանորոգվում են:

Առավել ծանր է վիճակը հատկապես ձմեռը, երբ դժվար է վթարի վայր հասնելը և դժվարանում ու երկարատև են դառնում ջրատարի վթարների վերացման աշխատանքները, որոնք փաստացի տևում են 1-2 օր:

Համայնքապետարանի կողմից իրականացված դիտարկումների արդյունքում պարզվել է, որ վերջին 5-7 տարիների ընթացքում աղբյուրների ջրերի ելքերը տարեց-տարի նվազում են:

որի հետևանքով համայնքի խմելու ջրապահանջը չի բավարարվում, բնակչության հաճախ տեղեկվելով դժվար պայմաններ և խնդիրներ հատկապես ցերեկվա ժամերին:

Ջրի ախտահանումը կատարվում ռեգերվուարում, քլորի հաբերի միջոցով:

#### Նախագծային Ջրապահանջ

Ստորև ներկայացված աղյուսակի մեջ ամփոփված են ջրապահանջի հաշվարկման նորմատիվային պահանջները.

#### Ջրապահանջի և սպառման չափանիշները

Չափանիշներ	Նորմը	Միավոր	Հիմնավորումը
Բնակչություն	150	լ/օ/մ	Համաձայն ՀՀՇՆ 40.01.02-20-ի ջրապահանջի նորմը նախատեսվում է 150 լ/օ/մ:
Տեղական/արտադրական սպառում	20	%	Համաձայն ՀՀՇՆ 40.01.02-20-ի ջրի տեղական արդյունաբերական և չնախատեսված սպառումը նախատեսվում է տնային տնտեսություններին տրվող ջրի 20%:
Անասունների խմելու և պահպանման ջրապահանջ	1-80	լ/օր	Կենդանիների համար նախատեսվող ջրապահանջի նորմերը տարբեր են և սահմանված են Գյուղնախարարության կողմից:
Սպասարկման մակարդակ	100	%	Գյուղի տների 100%-ը ունեն միացում բաշխիչ ցանցին:
Օրվա անհավասարաչափության գործակից ( $K_{\text{օր, max}}$ )	1,3	-	Պահանջարկի սեզոնային տատանումները հաշվի առնող գործակից: Համաձայն ՀՀՇՆ 40.01.02-20-ի $K=1,3$ :
Ջրօգտագործման ժամային անհավասարաչափության գործակից ( $K_{\text{ժամ, max}}$ )	3,5	-	Պահանջարկի ժամային տատանումները հաշվի առնող գործակից: Համաձայն ՀՀՇՆ 40.01.02-20 -ի 2.2 կետի՝ $K_{\text{ժամ, առավ}} = \alpha_{\text{առավ}} \times \beta_{\text{առավ}}$ , որտեղ $\alpha$ -ն ընդունում ենք $\alpha = 1,4$ , իսկ $\beta = 2,5$ :

#### Նախագծային լուծումները

##### Կապտաժներ

Տեխնիկական առաջադրանքի համաձայն գյուղի ջրապահանջի բավարարման համար նախատեսվել է օգտագործել նաև «Վերին ուլնոց» և «Գուսանի» աղբյուրների ջրերը, որոնք գտնվում են սարալանջի համապատասխանաբար 2323մ և 2242մ նիշերի վրա: Աղբյուրները վարընթաց են, ջրաբեր շերտի լայնությունը 1.5-2.0մ: Դիտարկումների համաձայն աղբյուրների ելքերի սեզոնային անհավասարաչափությունը կազմում է  $k=2.5-3$ : Աղբյուրները ծածկված են խոտաբույսերով:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում նախատեսվել է աղբյուրների ակունքներում կառուցել երկթևանի բետոնե կապտաժ, հակադարձ ֆիլտրով և 2մ ճակատով: Աղբյուրների հաշվարկային ելքերը ընդունվել են 2.5 լ/վ և 3.5 լ/վ:





Փականային հորը նախատեսվել է կապտաժից 6մ ներքև: Հորից նախատեսվել է նաև առանձին խողովակ ջրատարի նորոգումների ժամանակ ջրատարը փակելու և ջրերը դեպի ձորը հեռացնելու համար:

Ձորափերին տեղաբաշխված աղբյուրների ելքերի խափանումներ և «փախչում» թույլ չտալու համար կապտաժների կառուցման աշխատանքները նախատեսվել է իրականացնել ձեռքով:

#### **«Վերին ուլնոց» և «Գուսանի» աղբյուրների ջրագծեր**

Ջրագծերը ըստ պատասխանատվության համարվում են 3-րդ կարգի: Խողովակաշարերը նախագծվել են սարալանջերով հաշվի առնելով ջրագծերի ուղեգծերի գրունտների կարգերը, առկա ծորերն ու խոչնդոտները և հետագա շահագործման հնարավորությունը: Ջրագծերը նախատեսվել են ստորգետնյա:

Հաշվի առնելով, որ «Վերին ուլնոց» ջրագիծը անցնում է ժայռային գրունտներով խողովակաշարը նախատեսվել է պողպատյա, իսկ «Գուսանի» ջրագիծը՝ պոլիէթիլենից:

Ջրագծերի հիդրավլիկական հաշվարկը կատարվել է ելնելով ջրի շարժման թույլատրելի արագությունների, հիդրոստատիկ ճնշման առավելագույն օգտագործման և հուժքի անընդհատության պայմաններից: Խողովակաշարերում ճնշման կորուստի մեծության որոշման համար թեքությունները վերցվել են Շեվելյովի «Ջրմուղի խողովակների հիդրավլիկական հաշվարկների աղյուսակներից»: Խողովակաշարում ճնշման տեղական կորուստները ընդունվում են ճանապարհային կորուստի 20% -չափով:

Ջրագծերի տրամագծերի ընտրությունը կատարվել է հաշվի առնելով ստորգետնյա աղբյուրների ելքերը, համակարգի ընդլայնման հնարավորությունը և հուսալիությունը: Տնտեսապես ձեռնտու են այն տրամագծերը, որոնց դեպքում շինարարության և շահագործման ծախսերը կլինեն նվազագույնը, որը բնորոշվում է էկոնոմիկական ֆակտորով:

Ռինդ գյուղի ջրամատակարարման համակարգի համար, որը կառուցված է և շահագործվում է բարդ լեռնային գոտում, ընդունվել է  $\Theta = 1$ :

«Վերին ուլնոց» ջրագծի հաշվարկային  $q=2.5$ լ/վրկ ելքի և  $h=80$ մ դիրքի էներգիայի համար, հաշվի առնելով նաև ելքի ավելացման հետագա հնարավորությունը ի հաշիվ ձորի այլ աղբյուրների, ընտրվել է պողպատե ջրագծի տրամագիծը  $d=57 \times 3.5$ մմ:

«Գուսանի» ջրագծի հաշվարկային  $q=3.5$ լ/վրկ ելքի և  $h=4.5$ մ դիրքի էներգիայի համար ընտրվել է մետաղական ջրագծի տրամագիծը DN108x4.5

Մեխանիկական վնասվածքներից պողպատե խողովակների հակակոռոզիոն շերտը և պոլիէթիլենային խողովակները պաշտպանելու համար խրամուղու հետիցքը կատարվում է փափուկ գրունտից::

Ծրագծված խմելու ջրի խողովակաշարերը, ենթակառուցվածքները և հաղորդակցուղիները համատեղված ցույց են տրված բնակավայրի գլխավոր հատակագծի վրա:

#### **Ջրագծերի թաղման խորությունները**

Ջրագծի թաղման նվազագույն խորությունները որոշվել է սառեցման և մեխանիկական վնասումից խողովակները պաշտպանելու պայմաններից:

Ջրագծերի թաղման խորությունը ընդունվում է սառեցման խորությունից ներքև, բայց ոչ պակաս 0,5մ մինչև խողովակի վերին ծնիչը, պաշտպանելու համար խմելու ջուրը մակերևույթային տաքացումից համաձայն ՀՀՇՆ 40.01.02-2020:



Նախագծում «Վերին ուլնոց» ջրագծի թաղման նախագծային նվազագույն խորությունը ընդունվել է 1.0մ հաշված խողովակի ներքին ծնիչից, իսկ «Գուսանի» ջրագծի խորությունը 1.0մ:

### **Ջրամատակարարման համակարգի ռեզերվացիան**

Գյուղի խմելու ջրամատակարարումը իրականացվում է լեռնային ստորգետնյա մաքուր աղբյուրներից:

Գյուղի ջրամատակարարման համակարգը համաձայն ՀՀՇՆ40 -01.02-20 ըստ ապահովության աստիճանի հանդիսանում է 3-րդ կարգի, որի դեպքում համակարգում ջրամատակարարման ընդհատում թույլատրվում է 24 ժամ, իսկ ելքի 30 % նվազում՝ 15 օր:

Մայրուղի d150մմ տրամագծով միագիծ ՊԷ ջրատարը, որն ունի բարդ ուղեգիծ և 15կմ երկարություն, ըստ պատասխանատվության հանդիսանում է 3-րդ կարգի:

Ջրատար լ միագիծ է, հետևաբար սնուցման համակարգը չունի ռեզերվացիա:

Համակարգի հուսալիությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մեծացնել օբյեկտի մշտական ռեզերվացիան, որի համար նախագծում նախատեսվում է ջրի պահուստային ծավալ, որը համակարգի մնացած էլեմենտների հետ հավասարապես կմասնակցի համակարգի գործունեությանը:

Վթարների վերաբերյալ գյուղապետարանի տրված տվյալների հիման վրա որոշվել է շահագործվող համակարգի խափանման հոսքի պարամետրի միջին արժեքը, որը կազմում է  $\lambda_{\text{միջ}}=0.22$ , իսկ վերականգնման ժամանակը՝ ըստ ՀՀՇՆ40 -01.02-20  $T=12$  ժամ:

Կապտաժների և մայրուղի ջրատարի վրա միաժամանակյա վթարների թիվը ընդունվել է  $n=1$  վթար:

Գյուղի ջրամատակարարման տրակտը անխափան իրականացնելու համար Գուսան աղբյուրի մոտ նախատեսվել և հաշվարկվել է աղբյուրի ջրի 12 ժամվա վթարային ռեզերվացիոն ծավալ, հաշվարկային 1,2լ/վրկ ժամային ելքի համար, որը կազմում է.  $W_{\text{նեգ}}=52 \text{ մ}^3$

### **Ռեզերվուար**

Նախագծում նախատեսվել է ուղղանկյուն կտրվածքի ե/բ ռեզերվուար 50մ3 պաշարապահ ծավալով: Ռեզերվուարի տեղակայման համար գյուղից 3 կմ հեռու, Գուսան աղբյուրի հարակից թեք լանջին նախատեսվել է 300մ2 համայնքային նշանակության հողատարածք: Խմելու ջրի ռեզերվուարը համաձայն ՀՀՇՆ40-01-02 ունի հետևյալ դասակարգումը ըստ.

- Պատասխանատվության - II դաս,
- Հրակայունության - II աստիճան,
- Սեյսմիկ գոտեվորման - II գոտի, VIII-IX բալ,  $A_{\text{max}}=0.3g$

Կառուցվածքը ստորգետնյա է, ուղղանկյուն կտրվածքի, 4մx4մx3.5մ չափերով, թաղվում է հողում և թմբապատվում 0.5մ հաստության I և II խմբի գրունտներով: Ռեզերվուարը իրականացվում են մոնոլիտ երկաթբետոնից, օգտագործելով B25, W4, F100 դասի ծաւր բետոն:

Ռինդ գյուղում ձյան ծածկույթի նորմատիվային բեռը կազմում է 70 կգ/մ2, իսկ քամու ճնշումը 30 կգ/մ2:

Թմբապատված կառուցվածքը հանդիսանում են ուղղանկյուն փակ կառուցվածք, որի ստատիկ հաշվարկի համար կազմվել են հաշվարկային սխեմաներ նշելով գործող բեռների



- Հետլիցքի գրունտի ճնշումը, գերբեռնվածքի  $k=1.15$
- Թմբապատող գրունտի կշիռը,  $k=1.15$
- Կոնստրուկցիաների սեփական կշիռը,  $k=1.1$

- Հեղուկի ճնշումը կառուցվածքի ներսում,  $k=1$
- Ձյան բեռը,  $k=1.2$

Փականի տրամագիծը	DN50մմ, 100մմ;
Փականի տեսակը	Զուգահեռային,



Նյութի տեսակը	Պողպատե
Բանավորական ճնշումը	P=10մթն;
Խողովակի հետ միացման ձևը	Ֆլանեցային միացումով;
Կառավարումը	Մեխանիկական (ծեռքով)

Օդի մուտքի և ելքի ավտոմատ գործողության կափույրի հիմնական ցուցանիշներն են՝

Օդահեռի տրամագիծը	DN 25մմ
Օդահեռի տեսակը	Ավտոմատ, երկգործողության,
Նյութի տեսակը	Պողպատե
Բանավորական ճնշումը	P=10մթն;
Խողովակի հետ միացման ձևը	պարուրակային միացումով;

Ջրագծերի վրա նախատեսված արմատուրաները տեղադրվում են պոլիմեր ավազային և ե/բ հորերի մեջ:

Պողպատե խողովակների, ձևավոր մասերի և արմատուրաների համար նախատեսվել է արտաքին մակերևույթների հակակոռոզիոն պաշտպանություն:

#### **Ջրագծի կառուցման պահանջվող խողովակները**

Ջրամատակարարման համակարգը ներառյալ խողովակաշարը պետք է շահագործվի 24՝ անընդհատ հոսքի պայմաններում: Խմելու ջրի համակարգի կառուցման համար նախատեսվել են հետևյալ խողովակները.

Նոր խողովակաշարի կառուցում	
100 մմ տրամագիծ	108x4,5 նախատեսվում է օգտագործել ջրագծերի կառուցման համար
150մմ տրամագիծ	159x4,5 պողպատե խողովակը նախատեսվում է օգտագործել որպես ռեզերվուարի ելքի և մուտքի ջրագիծ:
100մմ տրամագիծ	108x4,0 պողպատե խողովակ նախատեսվում է օգտագործել որպես ռեզերվուարի դատարկման ջրագիծ:
50մմ տրամագիծ	57x3.5 պողպատե խողովակ նախատեսվում է օգտագործել որպես ջրագիծ:

Ձևավոր մասերը և փականները տեղակայվում են խողովակաշարի մոնտաժի հետ միաժամանակ:

Տեղադրման ընթացքում պետք է բացառվեն խողովակներում և ձևավոր մասերում ձգման լարումների առաջացումը:

Խողովակաշարի հիդրավլիկական փորձարկումը կատարվում է ՇՆԱԿ 3.05.04-85 պահանջների համաձայն:

#### **Փականային հորեր**

«Վերին ուլնոց» ջրագծի վրա փականային և օդահեռացման հորերը նախատեսվել են ուղղանկյուն կտրվածքի պոլիմեր ավազային հիմքով 640 x 515 x 675մմ դիտահորեր:





«Գուսանի» ջրագծի և ռեզերվուարի դիտահորերը նախագծվել են ե/բ-ից, Լլոր կտրվածքի  $d=1000$ մմ տրամագծով, 1,5մ խորությամբ, իսկ ռեզերվուարի կարգավորման հորինը՝ 2.5մ:

Դիտահորերում արմատուրաները տեղակայվում են բետոնե հիմքերի վրա պահպանելով նորմատիվային հեռավորություններ հատակից և պատերից:

Թուջե մտոցի տրամագիծը նախատեսվել է 600մմ, իսկ թուջե կափարիչը՝ ծանր:

#### **Գործող ջրագծերի վերանորոգումը**

Նախագծով նախատեսվել է փոխել գոյություն ունեցող վերգետնյա պողպատե  $d=57 \times 3.5$ մմ ջրագծերի ճաքած և դեֆորմացված 62մ ընդհանուր երկարության հատվածները և վերականգնել բոլոր ջրագծերի միներալային բամբակով ջերմամեկուսիչ շերտը, փաթաթել ապակու քաթանով և երեսապատել 0.5մմ հաստության ցինկապատ թիթեղով:

### *Շինարարական աշխատանքների տեխնոլոգիան*

#### **Նախապատրաստական աշխատանքներ**

Նախապատրաստական աշխատանքները նախորդում են հիմնական աշխատանքներին և իրականացվում են մինչև գրունտների մշակումը: Այն ընդգրկում է շինհրապարակի տարածքի նախապատրաստումը, չորացումը, գեոդեզիական տեղակայումը և նշահարումը, քանդման ենթակա ցանկապատերի և կառույցների քանդումը և այլն:

Հիմնական կառուցվածքների շինարարության համար հողային աշխատանքների տեխնոլոգիան ընդգրկում է գրունտի մշակում, հետլիցք, տեղափոխում, տոփանում և հարթեցման պրոցեսներ:

#### **Խրամուղու և փոսորակի մշակումը**

Հաշվի առնելով «Վերին ուլնոց» աղբյուրին հասնելու ճանապարհի բացակայությունը, առկա ձորերն ու խոչնդոտները, տեղանքի մեծ թեքությունը և մեքենաների մոտեցման հնարավորությունը նախատեսվել է ջրագծի  $0.5 \times 0.6$ մ ուղղանկյուն կտրվածքով խրամուղին մշակել ձեռքով:

Համաձայն ՇՆՏԼ 2.06.03-85 ուղղանկյուն կտրվածքով խրամուղու հաշվարկային խորությունը պոլիէթիլենային  $d 110$  մմ խողովակների համար կազմում է 1,1 մ, լայնությունը հիմքում 0.7 մ, իսկ ռեզերվուարի փոսորակի խորությունը 2.4մ:

Ջրագծի խրամուղու երկայնքով փորման խորության սահմանում ըստ տրված երկրաբանական պայմանների առանձնացվել են 3-6-րդ կարգի գրունտներ:

Հաշվի առնելով շրջանի բարդ երկրաբանական կառուցվածքն ու բնահողերի տեղադրման պայմանների ընդգծված առանձնահատկությունները, բացառված չէ, որ շինարարության ընթացքում բացված խրամուղիների որոշ հատվածներում բնահողերի մշակման խմբերը (կարգերը) չհամապատասխանեն նախագծայինի հետ: Նման դեպքերում երկրաբանական եզրակացության մեջ բնահողերի կարգերը կճշտվեն ինչպես բարձրագույն աշխատանքային պետ էլ իջեցման ուղղությամբ, հիմք ընդունելով փաստացի քանդված խրամուղու տվյալները: Ջրագծի վրա տեղակայվող հորերի տեղադրման համար փորվող փոսորակի չափերը ընդունվել են դիտահորերի չափերից 0.4մ մեծ: Հորի խորությունը ընդունվում է նրա հիմնատակից մինչև մտոցի վերին նիշը:



Խրամուղու մշակման համար էքսկավատորի ընտրությունը կատարվել է ելնելով.

- խրամուղու խորությունից և լայնությունից,
- գրունտների կարգից և աշխատանքների ծավալից,
- կողալիցքի իրականացումից,
- շինարարության ժամկետից և գրաֆիկից:

Խրամուղու մշակման և գրունտների բարձման համար ընտրվել է չափային 3-րդ կարգի 0,5 մ3 շերտի տարողությամբ, անվավոր, հակադարձ բահ էքսկավատոր:

Փորման ժամանակ կողալիցքի բարձրությունը պետք է 0,4-0,5մ ցածր լինի շերտի դատարկման նիշից: Էքսկավատորով խրամուղու մշակման ընթացքում չի թույլատրվում հիմնատակի գրունտի բնական ստրուկտուրայի խախտում, որի համար էքսկավատորը խրամուղին մինչև նախագծային նիշ չի փորում հիմնատակում թողնելով ենթաշերտ, որի հաստությունը կախված է էքսկավատորի տիպից: Հիմնատակի չքանդվող ենթաշերտի հաստությունը ընտրված էքսկավատորի համար ընդունվում է 5 սմ:

Պողպատե խողովակաշարի դեպքում այս ենթաշերտի մշակումը նախատեսվում է իրականացնել ձեռքով:

Պոլիէթիլենային խողովակաշարի դեպքում հաշվի առնելով, որ խողովակաշարի տակ իրականացվելու է նախապատրաստական շերտ համապատասխան խտացմամբ, խրամուղին փորվում է մինչև նախագծային նիշ:

#### **Խրամուղու հետլիցքը**

Խրամուղու մշակված գրունտներում քարերի առկայությունը և հիմնատակի հնարավոր ելունները կարող են վնասել խողովակաշարը, ինչը կանխելու համար նախատեսվում է նախապատրաստական շերտը և հետլիցքը իրականացնել փափուկ գրունտից:

Խողովակաշարերի կորագիծ հատվածների առկայության դեպքում հետլիցքը պետք է սկսել կոր հատվածից, իսկ ուղղահայաց կորի դեպքում վերևից ներքև:

Այդ նպատակների համար անհրաժեշտ ամբողջ գրունտը մշակման ընթացքում տեղավորվում է խրամուղու կողքը՝ փորվածքից ոչ հեռու: Կապալառուն պետք է կառուցվածքների

անհրաժեշտ պաշտպանական միջոցառումներ ձեռնարկի մակերեսային ջրերից պաշտպանվելու համար, կառուցելով ժամանակավոր դրենաժներ, և այլն:

Խողովակների տեղադրումից առաջ, խրամուղու հատակը ենթակա է հարթեցման:

Մոնտաժված ջրագծերի հետլիցքը կատարվում է 2 փուլով:

1-ին փուլի ժամանակ կատարվում է ներքին գոտու հետլիցք խողովակի վերևից 0,3մ բարձրությամբ 20սմ-ից մեծ չափերի խառնուկ չափարունակող գրունտով, բաց թողնելով խողովակաշարի միացման կարերը:

2-րդ փուլը իրականացվում է խողովակաշարի նախնական հիդրավիկական փորձարկումից հետո, որի ընթացքում կատարվում է վերին գոտու հետլիցք 20սմ-ից մեծ և խտացվող շերտի հաստության 2/3 գերազանցող չափերի խառնուկ չափարունակող գրունտով, ծածկելով նաև խողովակաշարի կարերը:

Հետլիցքը կատարվում է հետևյալ հերթականությամբ.





- տեղադրված պոլիէթիլենային խողովակի վրա 30սմ-ից ոչ պակաս հաստությամբ հետլիցքը կատարվում է տեղի փափուկ գրունտից ձեռքով, խողովակի երկու կողմից միաժամանակ, որպեսզի տեղակայված խողովակը չվնասվի կամ տեղաշարժվի: Հետլիցքը տոփանվում է ձեռքով, խողովակի շուրջ բոլորը, ձեռքի տոփիչներով, մինչև նախագծային խտությանը հասնելը;
- Մոնտաժված խողովակաշարի մնացած հետլիցքը կատարվում է տեղի գրունտով բուլդոզերով, ընդորում ներխառնուկները չպետք է գերեզանցեն ծավալի 20% -ը և այդ ներառուկները հավասարապես բաշխվեն հետլիցքի տարածքի մեջ: Հետլիցքի ժամանակ պետք է ապահովել խողովակաշարի պաշտպանությունը և հողի նախագծային խտությունը հասցնել առնվազն 95% կամ բնական գրունտի խտությանը:
- Տոփանվող շերտի հաստությունը ընդունվում է 20 սմ, իսկ տոփանումների նվազագույն քանակը նույն մակերեսին 4 անգամ: Տոփանված վերջին հողաշերտի մակերեսը պետք է հարթեցնել և հասցնել նախագծում տրված նիշին:

Հետլիցքից հետո տարածքի հարթեցման ժամանակ խողովակաշարի վրա, եթե այն գտնվում է ճանապարհից դուրս, արվում է թումբ, որի բարձրությունը պետք է լինի ոչ պակաս տարվա օրեկան առավելագույն տեղումների քանակից՝ 70մմ:

#### **Բետոնային աշխատանքներ**

Բետոնի հիմնական բնութագրումը ըստ բետոնի նորմատիվային դասի հաստատվում է համաձայն ամրության B, ցրտադիմացկունության F և անջրանցիկության W: Ամրության դասը սեղմամբ որոշելիս ընդունում են սեղման ժամանակ ամրության այն սահմանը կգ/սմ<sup>2</sup>, որ դիմանում է 20x20x20 սմ նմուշը, պատրաստված բանվորական կազմից և փորձարկված 28 օր նորմալ ամրացումից հետո:

Նախագծով նախատեսված է ծանր բետոն հետևյալ պարամետրերով.

B12.5, B15 – չոր պայմաններում աշխատող բետոն,

B25, F100, W4 – ջրի հետ շփման մեջ գտնվող բետոն:

Ջրանթափանցելիության և ցրտադիմացկունության պարամետրերով բետոնի շաղախի կազմը, ինչպես նաև նրա մեջ օգտագործվող հավելանյութերի տեսակը և քանակը, որոշվում է լաբորատոր փորձարկումների տվյալների հիման վրա:

Բետոնային շաղախը պատրաստվում է ըստ Միջպետական ԳՕՍՏ7473-2010 պահանջների և պետք է ապահովի որակի տրված ցուցանիշները:

Նյութերի համամասնությունը բետոնի մեջ պետք է ընտրվի ելնելով բետոնի հատկություններից, որն անհրաժեշտ է կառուցվող շինությանը և աշխատանքի պայմաններից: Բետոնային խառնուրդի կազմը, պատրաստումը, ընդունման կարգը, վերահսկման և տեղափոխման մեթոդները պետք է համապատասխանեն ԳՕՍՏ 27006 և ԳՕՍՏ 31384:

Բետոնային շաղախի յուրաքանչյուր պարտիա պետք է ունենա որակը հաստատող փաստաթուղթ, իսկ շաղախից վերցրված նմուշը ստուգվի լաբորատորիայում 28 օր հետո ըստ ԳՕՍՏ10180:

Բետոնի շաղախները պետք է ունենան որակի հետևյալ տեխնոլոգիական ցուցանիշները.

-հոսունության մարկան P2 35-41սմ,

-կոնի նստվածքը П2 5-9 սմ,

-կոշտությունը Ж2 11-20 վրկ,





-խտացման մարկան KY2 1,45-1,26

Բետոնի շաղախի տեղափոխումը շինհրապարակ նախատեսվում է իրականացնել ավտոբեռնախառնիչով, բացառելով նրանում խառնուրդի միատարրության խախտումը, ցեմենտահյութի կորուստը և մթնոլորտային տեղումների լցվելը:

Տեղափոխման ընթացքում շաղախի կոմպոնենտների լրացուցիչ քանակների ավելացում չի թույլատրվում, բայց ավտոբեռնախառնիչի դեպքում թույլատրվում է շինհրապարակում շաղախի հարմար տեղակայման համար հավելանյութերի խառնումը:

Բետոնի, երկաթբետոնի և կոնստրուկցիաների որակի վերահսկումը կարող է կատարվել առանց քանդելու, ֆիզիկական մեթոդներով, որոշելու համար բետոնի ամրությունը, նրա միատարրությունը, խոռոչների գոյությունը, ճաքերը և այլն: Եթե այդ փորձերով պարզվի, որ բետոնը չի համապատասխանում պահանջվող պայմաններին, ապա այդ դեֆեկտների վերացման հնարավորությունը և կարգը որոշվում է նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Բետոնը լցնելուց հետո հարկավոր է այն մանրակրկիտ խտացնել: Խտացման աշխատանքների համար օգտագործում են թրթռիչներ: Բետոնի խառնուրդի խտացման ժամանակ չի թույլատրվում թրթռիչը հենել ամրաններին, միջադիր դետալներին, ինչպես նաև կաղապարամածի ամրացման էլեմենտներին:

Խորքային թրթռիչի մխրճումը բետոնի խառնուրդի մեջ պետք է ապահովի նրա խորացումը նախապես լցված շերտի մեջ 5-10 սմ-ով:

Բետոնի ամրացման ընթացքում թրթռացումը արգելվում է: Բետոնը, որը խտացված չէ համարվում է անորակ:

Շինարարական կարերը թույլատրվում են միայն համաձայն գծագրերի: Կարերի իրականացման դեպքում մինչև բետոնի նոր շերտի լցումը արդեն տեղադրված բետոնի վրա (շինարարական կարի վրա), այդ շերտի մակերևույթը նախապատրաստվում է հետևյալ կերպ.

- Եթե նախապես լցված բետոնը չի ամրացել, մակերևույթը հարթեցնում են մետաղալար խոզանակներով կամ փչելով:
- Եթե բետոնը պնդացել է, բետոնի մակերևույթը պետք է կոպիտ տաշվի 1սմ խորությամբ այնպես, որ լցանյութի վնասված մասնիկները և փշացած բետոնը չմնան մակերևույթին:
- Մակերևույթը պետք է մանրագնին մաքրվի ցեմենտի կաթից, փրփուրներից և կեղտից: Մինչև բետոնի լցումը մակերևույթը թրջվում է:

#### **Ամրանային աշխատանքներ**

Ամրանները տեղադրվում են աշխատանքային գծագրերին համապատասխան:

Նախագծով նախատեսված ամրանի դասի, մակնիշի, տեսականու փոփոխությունը պետք է համաձայնեցվի հեղինակային հսկիչի հետ:

Ամրանային պողպատի մասնագիրը ներկայացված է աշխատանքային գծագրերում:

Եթե ուղեկցող փաստաթղթերի տվյալները և նախագծի պահանջներին համապատասխան առուգիչ փորձարկումների արդյունքները չեն համընկնում՝ ամրանների այդ խմբաքանակը արտադրության չի թույլատրվում: Պողպատե ամրանը չպետք է ճաքեր և շերտավորումներ ունենա: Բոլոր ամրանները պետք է մաքրվեն ժանգից և ամբողջ կաղապարամածը՝ յուղերից և ներկերից:

Պողպատե ամրանները պետք է պահվեն առանձին-առանձին, ըստ խմբաքանակների, ընդ որում պետք է կոռոզիայի և կեղտոտվելու դեմ միջոցառումներ կիրառվեն, ինչպես



նաև ապահովվի մատակարարի մետաղական պիտակների պահպանումը և դրանց հասանելիությունը:

Չլարվող ամրանները պետք է պահվեն ծածկի տակ, իսկ լարվողը և որմնակապերը՝ փակ, չոր շինություններում: Ձողային ամրանները պետք է դասավորվեն դարակաշարերի վրա:

Ամրանների նախապատրաստումը պետք է կատարվի СНИП 3.03.01-85 պահանջներին համապատասխան: Թույլատրվում է ձողերի կցվածքումը կատարել կոնտակտային եռակցումով՝ պահպանելով կցվածքային միացության հավասար ամրությունը:

Կցվածքային մակարդակները հնարավորին չափով տեղադրվում են աստիճանաձև:

Ամրանի մոնտաժումն սկսելուց առաջ պետք է ստուգվի կաղապարամածը: Ամրանը մոնտաժվում է այնպիսի հաջորդականությամբ, որն ապահովի ամրանի դիրքը և ամրացումը: Ամրանի ձողերի աստղաձև հատումները, որոնք մոնտաժված են հատ-հատ պետք է միացնել կապակցող լարերով:

Երբ ձողերի տրամագիծը 20մմ է, միացումը կատարվում է աղեղնային եռակցումով:

Մոնտաժված ամրանների և եռակցված կցվածքային միացությունների ընդունումը կատարվում է մինչև բետոնալցումը կազմելով ծածկված աշխատանքների ակտ:

Պողպատե ամրանների վրա բետոնի պաշտպանիչ շերտի հաստությունը պետք է համապատասխանի СНИП 2.03.01-84 և 2.06.08-77 -ին:

Ամրանի պաշտպանիչ շերտի հաստությունը պետք է լինի ոչ պակաս քան 3սմ, իսկ բետոնի պաշտպանիչ շերտի շեղումը նախագծայինից չպետք է գերազանցի 5մմ:

Բոլոր օգտագործվող պողպատե ամրանները պետք է մաքուր լինեն կեղտից, յուղից և ժանգից:

#### **Ջրագծերի հավաքովի երկաթբետոնե հորեր**

Ջրագծերի վրա նախատեսված արմատուրաները տեղադրվում են հավաքովի ե/բ կլոր հորերի մեջ, որոնց տրամագծերը և բարձրությունները որոշվում են ըստ ՀՀՇՆ40-01.02-20:

Հավաքովի երկաթբետոնե հորերը պետք է համապատասխանեն հավաքովի երկաթբետոնե արտադրատեսակների մասնագրերին:

Ե/բ կոնստրուկցիան, որի վրա չկա ժամկետանշում՝ կարող է խոտանվել: Փոխադրման ենթակա են միայն այն կոնստրուկցիաները, որոնց բետոնի ամրությունը հասել է մինչև բացթողման ամրության, համապատասխան ԳՈՍՏ 13015 պահանջներին և կոնստրուկցիաների կոնկրետ տեսակների ստանդարտների կամ պայմանների պահանջների:

Հավաքովի բետոնե կոնստրուկցիաները լինում են ամրանավորված և ոչ ամրանավորված: Հավաքովի կոնստրուկցիաների բետոնի որակը և փորձարկումը պետք է համապատասխանեն ԳՈՍՏ 7473-76:

Հավաքովի բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների տարրերը պետք է համապատասխանեն գծագրերում նշված չափսերին:

Միջադիր դետալները ամրացնելու համար հարկավոր է դրանց մեջ անցքեր նախատեսել:

Միջադիր դետալները պետք է ժանգոտ չլինեն և չունենան ճարպային, կեղտի և այլ բծեր:

Հորի պատի մեջով խողովակի անցկացումից հետո բացվածքը պետք է խցանակել ապահովելով միացման խտությունը:





## **Խողովակաշարերի մոնտաժը**

Նախագծում ընդգրկված օգտագործման ենթակա բոլոր նյութերը պետք է լինեն նոր և չօգտագործված:

Կապալառուն խողովակների ձեռք բերման դեպքում պարտավոր է ներկայացնել հետևյալ սերտիֆիկատները՝

- Խողովակ արտադրողի վկայականը

- Խողովակների ստուգման լաբորատոր տեստերի սերտիֆիկատ

Խողովակները պետք է անցնեն գործարանային, հիդրավլիկ և հարվածային փորձարկումներ: Տեստավորման համար նմուշների ընտրությունը և քանակությունը, տեստավորման ընթացակարգ և պահանջները պետք է համապատասխանեն համապատասխան ԳՈՍՏ-երին:

Կապալառուն պետք է ապահովի բոլոր անհրաժեշտ խողովակները և ձևավոր մասերը, որոնք անհրաժեշտ են աշխատանքների իրականացման համար, ինչպես նշված է գծագրերում, Պողպատյա խողովակները պետք է պատրաստված լինեն ըստ Ստանդարտի ԳՈՍՏ 10704-91 (հոսունոթյան սահմանը ոչ պակաս 235 МРА) կամ նրանց էկվիվալենտը: Խողովակների արտաքին մեկուսացումը պետք է համապատասխանի ՇՆԱԿ 2.05.06-85:

Պոլիէթիլենային խողովակները պետք է պատրաստված լինեն ըստ Ստանդարտի ԳՈՍՏ 18599-2001: Պոլիէթիլենի նյութի տեսակը ՊՅ100:

Բոլոր խողովակները, խողովակների սեկցիաները կամ շարանը (посеть) պետք է տեղադրվեն իրենց տեղերում ստույգ և զգույշ, ուղիղ գծով և շեպով այնպես, որը վերջնական խողովակաշարը իրենից ներկայացնի, միացնող արմատուրայի, օդահանների և դատարկող փականների միջև, մեղմ կորգիծ ինչպես հորիզոնական այնպես էլ ուղղահայաց հարթությունում:

Բոլոր խողովակները տեղադրվում են գծագրերում նշված գծերով և մակարդակներով, ընդունված շեղումների սահմաններում:

Խողովակների բարձումը և իջեցումը պետք է կատարվի զգուշությամբ: Կապալառուն պատասխանատու է խողովակների որակի և վիճակի համար, ինչպես մինչև շինհրապարակ տեղափոխումը այնպես էլ տեղափոխումից հետո:

Աշխատանքների անբողջ ընթացքում Կապալառուն ապահովում է նյութերի, շինարարական հարթակի, բանվորական ուժի, վերահսկման բավարար քանակությունը:

Տեղափոխման ժամանակ մեքենայից խողովակների կախվածքը պետք է կազմի ոչ ավել քան 0.6մ, իսկ շարվածքի բարձրությունը ոչ ավել քան 2մ:

Թույլ չի տրվում խողովակները քաշել հողի վրայով, դա համարվում է բավարար հիմք ցանկացած քանակության խողովակների մոնտաժումից հրաժարվելու համար:

Խողովակները պետք է պահվեն սովորացված հարթակում և համաձայն արտադրողի ինստրուկցիաների:

Շինհրապարակում պահելու դեպքում, շինհրապարակը պետք է մաքրված լինի քարերից:

Կապալառուն պետք է հրաժարվի խողովակների այն պարտիայից, որտեղ բացահայտվել են անորակ խողովակներ:

## **Պողպատե խողովակաշարի մոնտաժը**

Հակակոռոզիոն նյութերով պատված խողովակների և հավաքված սեկցիաների տեղափոխման ժամանակ, անհրաժեշտ է օգտագործել փափուկ աքցանային բռնիներ, ճկուն շեղք և այլ միջոցներ, որոնք բացառում են հակակոռոզիոն պատվածքների վնասվածքը:





խողովակները և ձևավոր մասերը, ամրանները և պատրաստի հանգույցները մինչև մոնտաժումը պետք է մաքրված լինեն կեղտից, ծյունից, սառույցից, յուղից և այլ կոռուցիկ նյութերից:

Խողովակների մոնտաժումը պետք է կատարվի աշխատանքների կատարման նախագծին համաձայն և տեխնիկական քարտերով ստուգելուց հետո՝ խրամուղու հատակի նիշը, պատերի ամրացումը և հենման կոնստրուկցիաների տեղադրումը: Ստուգման արդյունքները պետք է շտապելով աշխատանքների գրանցման մատյանում:

Ուղղագծային հատվածներում խողովակաշարի տեղադրման ժամանակ պողպատե խողովակների միացման ծայրերը պետք է կենտրոնից շեղվեն այնպես, որ կտրվածքի ճեղքը հավասարաչափ լինի ամբողջ շրջագծով:

Նախագծային դիրքից ճնշումային խողովակագծերի առանցքի շեղումը հատակագծի նկատմամբ չպետք է անցնի  $\pm 100$  մմ-ից, իսկ վերին նիշը՝ ճնշումային խողովակների համար  $\pm 30$  մմ:

Ձևավոր մասերի կցաշուրթերը և արմատության պետք է մոնտաժվեն պահպանելով հետևյալ պահանջները.

- կցաշուրթային միացումները պետք է տեղակայվեն խողովակների առանցքին ուղղահայաց,
- միացվող կցաշուրթերի հարթությունները պետք է հավասար լինեն, հեղույսի մանեկները պետք է տեղադրված լինեն միացման մի կողմում, հեղույսի ձգումը կատարվում է համաչափ՝ խաչը - խաչին;
- կցաշուրթերի ծովածության վերացումը թեք տակդիր տեղադրելով կամ հեղույսների ձգումով՝ չի թույլատրվում;
- միացումների եռակցումը կցաշուրթային միացումներին հատակից, պետք է կատարել միայն կցաշուրթերի վրա հեղույսների հավասարաչափ ձգումից հետո:

Եռակցման համար խողովակների տեղադրումից առաջ, անհրաժեշտ է կատարել.

- խողովակների ճկված եզրերի ուղղում;
- իսկ անհրաժեշտության դեպքում՝ կտրում, բացառելով նոր ճեղքերի և ճգնվածքների առաջացումը;
- օդի  $5^{\circ}\text{C}$ -ից ցածր ջերմաստիճանների դեպքում խողովակների եզրերի ուղղումը, առանց նախօրոք տաքացման, չի թույլատրվում: Խողովակների եզրերը  $20$  մմ լայնությամբ ներսից և դրսից մաքրվում են մինչև մետաղական փայլի ստացումը;
- խողովակի եզրի շեղում եռակցումից առաջ չպետք է գերազանցի  $0.15S \pm 0.5$  մմ չափը ( $S$  - ը մետաղի հաստությունն է) ըստ ՇՆԱԿ III-29-76, ԳՈՍՏ 16037-80 եռակցման համար նախատեսված դիրքը պետք է հուսալիորեն ֆիքսվի արտաքին կենտրոնացուցիչներով և այդ դիրքում ամրացվի  $2-3$  տեղում  $30-40$  մմ երկարության եռակցման կարով, որի հաստությունը պետք է լինի  $0.5S$ -ից ոչ ավելի:

Խողովակի մինչև  $6$  մմ հաստության և եզրի կտրվածքի  $30^{\circ}$  շեղիստի դեպքում եռակցումը իրականացվում է  $2$  շերտով:  $6$  մմ ավել հաստության դեպքում եռակցումը արվում է եռաշերտ, ընդ որում ամեն հաջորդ շերտը իրականացվում է նախորդ խարամից և հավաճ մետաղի ցալտերից մաքրելուց հետո:

Ձեռքով գազաեռակցման դեպքում անկախ խողովակի հաստությունից կարող իրականացվում է մեկ շերտով:





Եռակցման ժամանակ 2 ժամից ավելի ընդմիջման դեպքում խողովակի եռակցվող հատվածի ծայրը պետք է խցանել կանխարգելելու համար ձյան, կեղտի և այլ նյութերի ներթափանցումը խողովակի մեջ:

Երբ քամու արագությունը 10մ/վրկ -ից ավելի է և առկա են մթնոլորտային տեղումներ, եռակցման աշխատանքները կարելի է կատարել միայն ծածկի տակ:

Եռակցվող կցատեղի ստուգումը կատարվում է.

- աշխատանքերի սխտեմատիկ ստուգմամբ, որոնք իրականացվում են խողովակների հավաքման և եռակցման ընթացքում,
- եռակցված միացությունների զննմամբ և չափմամբ,
- եռակցված կարերի ստուգում, փորձարկման չքայքայող (չքանդող) մեթոդները,

Արտաքին զննման ենթարկվում են բոլոր կցատեղերը:

#### **Պլիէթիլեն խողովակաշարի մոնտաժ**

Եռակցման ձևերն ու տեսակները, կոնստրուկտիվ էլեմենտները, եռակցվող միացությունների չափերը պետք է համապատասխանեն ԳՈՍՏ 16037-80 պահանջներին: Հողային աշխատանքների և հիմքերի ՇՆևԿ 3.02.01-87 պահանջների բավարարումից հետո, խրամուղու երկայնքով տեղադրում են խողովակները՝ նախօրոք մաքրելով խողովակի ներքին խողոզը (ժանգից, տարբեր տեսակի կեղտ)՝ ռից, ձյունից և այլն): Նախագծով առաջարկվում է պլիէթիլենային խողովակների չերկատվող, եռակցվող կցվանքով միացում:

Եռակցման աշխատանքները թույլատրվում է կատարել մինչև մինուս 10°C ջերմաստիճանում: Զերմասիճանի ավելի ցածրի դեպքում եռակցման աշխատանքները կատարվում են տաքացվող տարածքներում: Երբ քամու արագությունը 10մ/վրկ -ից ավելի է և առկա են մթնոլորտային տեղումներ, եռակցման աշխատանքները կարելի է կատարել միայն ծածկի տակ: Եռակցման աշխատանքների իրականացման ժամանակ եռակցման տարածքը պետք է պահպանել մթնոլորտային տեղումներից և փոշուց:

Պլիէթիլենային խողովակների միացումը իրար հետ և ձևավոր մասերին պետք է իրականացնեն տաքացված գործիքով կոնտակտա-կցվացքային եռակցման եղանակով: Տարբեր տեսակի պլիէթիլենից պատրաստված խողովակների և ձևավոր մասերի եռակցումը իրար հետ չի թույլատրվում:

Եռակցման համար պետք է օգտագործել գործիքներ , որոնք կապահովեն տեխնոլոգիական ռեժիմների պարամետրերի պահպանումը համաձայն OCT 6-19-505-79 և այլ նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի:

Պլիէթիլենային խողովակների միացումները պետք է իրականացվեն ըստ արտադրողի հանձնարարականների և համապատասխան ISO 21307:2011:

Ծայրերի եռակցումը /сварка встык/ առաջնահերթ մեթոդ է և պետք է օգտագործվի պլիէթիլենային խողովակների միացման համար: Առանձին դեպքերում կարող է կիրառվել հալումով էլեկտրաեռակցում պլիէթիլենային խողովակները միացնելու համար:

Եռակցվող կցվանքով միացման ժամանակ խողովակների կողաճակատները տաքացվում են մինչև մակերևույթի հալումը, ապա հալված մակերևույթները միացվում են 0.15-0.20ՄՊա ճնշման տակ, 3-4 րոպեի ընթացքում: Պատերի հաստության տարբերությունը և եռակցվող եզրերի շեղումը պետք է լինի ոչ ավել, քան պատի հաստության 10%-ը:





Եռակցման ժամանակ 2 ժամից ավելի ընդմիջման դեպքում խողովակի եռակցվող հատվածի ծայրը պետք է խցանել կանխարգելելու համար ձյան, կեղտի և այլ նյութերի ներթափանցումը խողովակի մեջ:

Եռակցվող կցատեղի ստուգումը կատարվում է օպերացիոն վերահսկումով և արտաքին զննումով: Արտաքին զննման ենթարկվում են բոլոր կցատեղերը: Պոլիէթիլենային խողովակների եռակցմանը թույլ են տրվում եռակցողներ, որոնք ունեն համապատասխան փաստաթղթեր պլաստմասե եռակցման աշխատանքների իրականացման իրավունքի վերաբերյալ:

#### **Խողովակների տեղադրումը խրամուղիներում**

Նախքան պողպատե խողովակաշարի մոնտաժման աշխատանքները սկսելը խրամուղու հատակը հարթեցվում է, ժայռային գրունտների դեպքում կառուցվում է նախապատրաստական շերտ փափուկ բնահողով, որի մեջ 2սմ-ից ավել ներառուկները հեռացվում են:

Պոլիէթիլենային խողովակների հուսալիության համար նախապատրաստական շերտը պարտադիր է, որը տոփանվում է և բերվում նախագծային նիշին, որից հետո միայն թույլ է տրվում խողովակի տեղադրումը խրամուղու մեջ:

Պողպատե խողովակները բերվում և տեղակայվում են խրամուղու եզերքին հատուկ տագդիրների վրա հողից ոչ պակաս քան 30սմ բարձրության վրա: Խրամուղու եզերքին տակդիրների վրա կատարվում է խողովակների սեկցիաների երկարացում և ամբարձիչի (խողովակատեղադրիչներ) և հեծանների միջոցով իրականացվում է սեկցիայի իջեցում խրամուղու մեջ:

Պոլիէթիլենե խողովակները բերվում և տեղակայվում են խրամուղու եզերքին հատուկ տագդիրների վրա: Խրամուղու եզերքին տակդիրների վրա կատարվում է խողովակների սեկցիաների երկարացում և իրականացվում է սեկցիայի իջեցում խրամուղու մեջ: Խրամուղու մեջ երկու երկարացված սեկցիաների կցումը իրար կատարվում է գետնափոսից:

Եթե հարթակի ոչ բավարար լայնության պայմանից ելնելով հնարավոր չէ բերված խողովակները տեղակայել խրամուղու եզերքին ապա խողովակների տեղակայումը և մոնտաժումը իրականացվում է խրամուղու մեջ առանձին խողովակներով, խողովակների կցումը իրականացվում է գետնափոսից, կամ լավագույն դեպքում կատարվում է խողովակների սեկցիաների երկարացում խրամուղու վրա տեղակայված լաստակների (лежни) վրա, ապա տեղափոխվում խրամուղու մեջ ամբարձիչի և հեծանի միջոցով:

Որպիսի բացառել խողովակի մեջ օտար մարմնի հայտնվելը վերջին տեղադրվող խողովակի ծայրին տեղադրվում է խցափակիչ:

Պետք է ուշադրություն դարձնել խողովակների հիմքի վրա, այն պետք է լինի ուղիղ, ինչպես ցույց է տրված գծագրերում:

Խողովակները տեղադրվում են կոունկների կան խողովակատեղադրիչների օգնությամբ:

Չի թույլատրվում գցել խողովակները խրամուղու մեջ, խողովակը իջեցնում են այն դիրքով, որը թույլ է տալիս միացում իրականացնել:

#### **Խողովակների հակակոռոզիոն պաշտպանությունը**

Պողպատե ստորգետնյա խողովակաշարի պաշտպանությունը կորոզիայից նախատեսվում է իրականացնել ուժեղացված բիտում-ռետինային եղանակով, որն ունի հետևյալ կազմը

- բիտումային գրունտովկա,
- բիտում ռետինային մածիկ – 3 մմ.





- ապակեքաթանի շերտ
- բիտում ռետինային մածիկ – 3 մմ.
- բրիզոլի շերտ:

Մեկուսացման ենթակա մակերեսը պետք է լինի մաքուր կեղտից, փոշուց, յուղից և ներկի հետքերից:

Խողովակների մեկուսացումը սկսում են նախաձեռնել շերտի քսումով մեկուսացվող մակերևույթի վրա: Բիտումային նախաձեռնելիցները պատրաստում են բիտումից, որը լուծված է բենզինի մեջ 1:3 հարաբերությամբ ըստ ծավալի կամ 1:2 - ըստ զանգվածի: Պրայմերով պատվում է ամբողջ մաքրված մակերևույթը, որի արդյունքում առաջանում է 0,1-0,15մմ հաստության թաղանթ: Ռետինային նախաձեռնելիցը քսելուց հետո 10-12 օրվա ընթացքում անհրաժեշտ է քսել բիտումային մաստիկան, քանի որ նախաձեռնելիցը դառնում է փխրուն և ենթակա է փոփոխության:

Բիտում ռետինային մածիկը իրենից ներկայացնում է 80-93 % բիտում, 5-10% ռետինե փշրանք, 3-10% պլաստիֆիկատոր: Ռետինե փշրանքը դա մաշված անվադողերի մանրացույն է: Մածիկը քսում են չորացած գրունտով կի վրա տաք վիճակում՝ 160 – 180°:

Խողովակին քսված մածիկի տաք ծածկույթի վրա պարուրած և փաթաթվում է արտաքին փաթեթավորման բրիզոլի շերտը, իսկ ապակեքաթանը օգտագործվում է փաթեթվածքը ամրակապելու համար:

Որպես հակակորոզիոն նյութ պատվածքի համար առաջարկվում է օգտագործել նաև ժամանակակից բիտումապոլիմերային մածիկներ, որոնց տեխնիկական ցուցանիշները համապատասխանում են պահանջվող նորմերին:

#### **Խողովակային արմատության մոնտաժը**

Տեղափոխման, պահպանման, մոնտաժման, և շահագործման ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ աշխատանքները.

-արմատության տեղափոխումը իրականացնել խցափակող կարճախողովակներ և օգտագործմամբ պատրաստող գործարանի փաթեթով կամ բաց վիճակում չոր շինություններում դարակաշարերի վրա (վերջին դեպքում անհրաժեշտ է խցափողի առկայությունը): Երկարատև պահպանման դեպքում փոխել քսանյութը մշակված մակերևույթների վրա և հեռացնել կեղտն ու ժանգը:

-արմատության, որի իրանի վրա նշված է աշխատող միջավայրի հոսքի ուղղությունը, խողովակաշարի վրա տեղակայում են այնպես, որ միջավայրի շարժման ուղղությունը համընկնի սլաքի ուղղությանը,

-կցաշութային արմատության մոնտաժման ընթացքում, խողովակաշարերի վրա կցաշութերը տեղակայել առանց շեղումների: Հեղույսները ձգել նորմալ մանեկային բանալիներով, այնպիսի եղանակներով, որոնք երաշխավորում են շեղումների և գերձգվածության բացակայությունը;

-խողովակաշարի արմատության տեղակայելուց առաջ մանրակրկիտ մաքրել կեղտից ավազից ելուստներից և այլն;

-խողովակաշարը ամրության տակ հիդրավլիկական փորձարկումների ենթարկելու արմատության փականները պետք է լրիվ բացված լինեն;

-արմատության տեղադրել այնպիսի տեղերում, որոնք հասանելի են շահագործման և զննման համար;





-արմատության օգտագործել ըստ նշանակության համաձայն տեխնիկական անձնագրի, տեխնիկական պայմանների, ստանդարտների և պատվերի հատուկ պայմանների,

-բաց անել փակող արմատության լրիվ մինչև հենակը, փակել նորմալ ուժով, կիպությունը ապահովել առանց լրացուցիչ լծակների օգտագործման էլեկտրաշարժաքերի օգնությամբ, սողնակների բացման դեպքում այն պետք է անջատվի այն պահին, երբ փականը կգտնվի վերջին ծայրային դիրքից 10-12մմ հեռավորության վրա:

Վերին կիպությունը ապահովվում է ձեռքի կրկնորդի թափանիվի պտտմամբ:

-խցուկային հեղույսները և գամասեղները ձգել համաչափ շեղվածքներից խուսափելու համար,

-իլերի արտաքին պարուրակը յուղել ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ,

-երբ միջադիրների կիպությունը չապահովելու վիճակ է հայտնաբերվում իրանի և կափարիչի միջև, արմատության հանել խողովակաշարից քանդել և մանրազննին ստուգել: Խոցիչների մակերևույթների վրա թերությունները վերացնել շրջատաշումով և հետագա կիպահղկումով կամ միայն կիպահղկումով:

Խցիչների մակերևույթների նմանօրինակ վերանորոգման հնարավորությունը պետք է նախատեսված լինի կոնստրուկցիայում:

Կապալառուն պարտավոր է ներկայացնել փականների, հակադարձ կափույրների, կափույրների և այլն, ամբողջական դետալային բնութագրերը, ներառյալ արտադրողի գծագրերը և մասնագրերը:

### Նորմատիվային պահանջները

#### **Ճնշումային խողովակաշարերի և ռեզերվուարի փորձարկումը**

Ճնշումային խողովակների հերմետիկությունն ու ամրությունը ստուգվում է հիդրավլիկ կամ պնևմատիկ փորձարկման միջոցով: Փորձարկման ձևն ընտրվում է կախված կլիմայական պայմաններից, ջրի առկայությունից և դատարկելու հնարավորությունից:

Նախագծում նախատեսված է խողովակաշարի հիդրավլիկական փորձարկում: Ճնշումային խողովակաշարերի փորձարկումը իրականացվում է շին-մոնտաժային կազմակերպության կողմից, երկու փուլով՝

**առաջին փուլ** – նախնական փորձարկում հերմետիկության և ամրության ստուգման համար, որը իրականացվում է խողովակի մասնակի հետլիցքից հետո СНП 3.02.01-87 պահանջներին համաձայն, զննման համար բաց թողնելով կցվածքները: Այս փորձարկումը թույլ է տրվում իրականացնել առանց պատվիրատուի և շահագործողի ներկայացուցիչների մասնակցության: Նախնական փորձարկման փուլում կազմվում է ակտ իրականացված փորձարկման վերաբերյալ, որը հաստատվում է շինարարական կազմակերպության գլխավոր ինժեների կողմից:

**երկրորդ փուլ** – վերջնական փորձարկում հերմետիկության և ամրության ստուգման համար, որը իրականացվում է խողովակաշարի ամբողջական հետլիցքից հետո, պատվիրատուի և շահագործողի ներկայացուցիչների պարտադիր մասնակցությամբ և կազմվում է ակտ փորձարկման արդյունքների վերաբերյալ: Կազմվող ակտի ձևը բերվում է СНП 3.05.04-85\*(1991) հավելված 1-ում:



Երկու դեպքում էլ փորձարկումն իրականացվում է առանց հիդրանտների, օդահեռների և պաշտպանիչ կափույրների տեղադրման: Դրանց փոխարեն տեղադրում են կցաշուրթավոր փակիչներ (защелка):

Պոլիէթիլենային խողովակաշարը, անկախ փորձարկման եղանակից, պետք է փորձարկել 0.5կմ-ից ոչ ավել երակությամբ, մեկ անգամով (за один прием), իսկ 0.5կմ –ից ավել երկարության դեպքում, 0.5կմ-ից ոչ ավել հատվածներով:

Հերմետիկության փորձարկման ճնշման մեծությունը  $P$  ինչպես նախնական այնպես էլ վերջնական փորձարկման ժամանակ, պետք է հավասար լինի ներքին հաշվարկային ճնշմանը  $P_h$  գումարած  $\Delta P$  մեծությունը, որը վերցվում է СНиП 3.05.04-85\*(1990) 4 աղյուսակ-ից կախված ճնշման չափման վերին նիշից, մանոմետրի սանդղակի նիշերի չափի և դասի ճշգրտության և  $P_h$  –ի մեծությունը չպետք է գերազանցի վերջնական ամրության փորձարկման ճնշման  $P_{\phi}$  մեծությունը:

Նախագծում նախնական հիդրավլիկական փորձարկային ճնշման  $P_h$  մեծությունը ընդունվում է համաձայն СНиП 3.05.04-85\*(1990) աղյուսակ 5-ից: Նախնական փորձարկման ժամանակ փորձարկման ճնշման մեծությունը հավասար է ներքին հաշվարկային ճնշմանը 1.3 գործակցով, մեր դեպքում  $1.0 \times 1.3 = 1.3 \text{ ՄՊա}$  և  $1.6 \times 1.3 = 2.08 \text{ ՄՊա}$ :

Ճնշումային խողովակաշարը համարվում է նախնական և վերջնական հերմետիկացման փորձարկումը անցած, եթե ներմուծվող ջրի ծախսի քանակը չի գերազանցում ներմուծվող ջրի ծախսի թույլատրելի քանակը փորձարկվող 1կմ և ավելի հատվածի համար, որը բերված է СНиП 3.05.04-85\*(1990) 6\* աղյուսակում:

Պոլիէթիլենային խողովակների համար վերցվում է 6\* աղյուսակում բերված պողպատե խողովակների համար ցուցանիշները և ըստ պոլիէթիլենային խողովակների տրամագծի կատարվում է ցուցանիշների ինտերպոլացիա:

Եթե ներմուծվող ջրի ծախսի քանակը գերազանցում է թույլատրելիից, ապա խողովակաշարը համարվում է փորձարկումը չանցած և պետք է ձեռնարկվեն միջոցներ թաքնված թերությունների բացահատման և վերացման համար, որից հետո իրականացվում է խողովակաշարի կրկնակի փորձարկում:

Փորձարկվող խողովակաշարը ջրով պետք է լցնել ոչ ավել քան  $4-5 \text{ մ}^3/\text{ժամ}$  ինտենսիվությամբ:

### **Խողովակաշարերի լվացումը**

Շինարարությունը ավարտած խողովակաշարերը և կառուցվածքները շահագործման հանձնումից առաջ, ենթակա են լվացման:

Խողովակաշարերի և կառուցվածքների լվացումը իրականացվում է շինարարությունը իրականացնող շին. մոնտաժային կազմակերպության կողմից, պատվիրատուի և շահագործող կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Խողովակաշարի մաքրումը և լվացումը մնացած կեղտի և պատահական առարկաների հեռացման համար կատարվում է, որպես կանոն հիդրավլիկ փորձարկումից առաջ, ջրաօդային ճանապարհով կամ միայն ջրով:

Խողովակաշարերի լցման և դատարկման ժամանակ Օդի մուտքն ու ելքը ջրագծեր իրականացվելու է մագիստրալ խողովակաշարերի ծայրերի բաց կտրվածքներից՝ և 02277374 օդահեռներից, իսկ բաժանարար ջրագծերում՝ ջրթողերի միջոցով: Խողովակաշարերի դատարկումը նախատեսված է իրականացնել պոմպակայանների դատարկման խողովակների և ջրթողերի միջոցով:



## Շինարարության կազմակերպման նախագիծ

### Շինհրապարակ և կապալառուի պահեստային շինություններ

Կապալառու պետք է հետազոտի անհրաժեշտ նյութերի մատակարարման և տեղափոխման հնարավորությունը շինարարական օբյեկտ: Նա ուսումնասիրում է գոյություն ունեցող ճանապարհների և անցումների պիտանիությունը՝ նյութերի անխափան տեղափոխությունն ապահովելու նպատակով:

Առաջարկվում է կազմակերպել մեկ շինարարական տնտեսություն համապատասխան օժանդակ կառույցներով, որը շինարարության ընթացքի հետ զուգահեռ կտեղափոխվի և կտեղակալվի իր համար հատկացված համապատասխան չօգտագործվող տարածք:

#### Ժամանակավոր շինարարական տնտեսության շենքերի և շինությունների ցուցակ

h/h	Լնվանում	Քանակ	Չափեր, մ	Ծախ-սվող հետք	Ծանոթագրություն
1	2	3	4	5	6
1	Լճխենի գոսսենյակ	1	9 X 2.2	2	Վազոն տնակ
2	Բանվորական հանգստատեղ	1	9 X 2.2	2	Վազոն տնակ
3	Լեն տեղանոց թիոգուլառան	1	D 1.3		-
4	Լ հսաձածն աահեստ	1	6 X 3		-
5	Գործիքների պահեստ	1	4 X 2.5		տնակ
6	Լ նքենանեղի հառթակ	1	10.0 X 4		

### Գոյություն ունեցող մալուխները, խողովակաշարերը և կառուցվածքները

Պայմանագրային գոտու սահմաններում գոյություն ունեցող էլեկտրահաղորդալարերի և խողովակաշարերի համակարգերի գծագրերը ընդգրկված չեն պայմանագրային փաստաթղթերում: Խորհրդակցությունների կազմակերպումը շահագործման իրազեկ ներկայացրացիչների հետ վերոհիշյալ համակարգերի տվյալների հավաքման նպատակով կատարում է Պատվիրատուն կամ Տեխնիկական հսկիչը:

Գոյություն ունեցող հաղորդալարերի և խողովակաշարային համակարգերի մասին ամբողջական տեղեկատվությունը Կապալառուին ապահովում Պատվիրատուն: Նա պետք է հետևի իր ահանգներին և անհրաժեշտության դեպքում նախագգուշական միջոցներ ձեռնարկի այդ համակարգերի պաշտպանության համար: Մալուխների և խողովակաշարերի անմիջական մոտիկությամբ հողափոր մեքենաների աշխատանքները չեն իրականացվում առանց շահագործող ներկայացուցիչների ներկայության: Հարկ է ապահովել հնարավոր մուտքը նշված համակարգերի վթարների դեպքում:

### Կատարողական փաստաթղթերը

Օբյեկտի Ավարտական ակտի պատրաստումից առաջ կապալառուն նախապատրաստում և պատվիրատուին է ներկայացնում կատարողական գծագրերի 2 սովորական պատճեն և 1 օրինակ գճագրապատճե (PDF), որոնց վրա պետք է պարզ նշված լինեն տեղադրությունները, խորությունները, թեքությունները, բարձրությունները, բոլոր հիմնական կառուցվածքների ձևերն ու չափերը, այնպես, ինչպես դրանք իրականացվել են:

Բոլոր դաշտային մատյանները, հաշվարկները, քարտեզները և այլ գեոդեզիական նյութերը պետք է հանձնվեն Տեխնիկային և պատվիրատուին այդ աշխատանքների ավարտից հետո: Տվյալները, որոնք ստացվում են գեոդեզիական աշխատանքներից, մտցվում են դաշտային մատյանների մեջ և հանձնվում:

### Սահմանված որակի ապահովում

Կատարված աշխատանքները և օգտագործվող նյութերի որակները պետք համապատասխանեն նախագծին, պահանջվող ստանդարտներին և նորմերին:



Կատարողական գծագրերը պետք է համապատասխանեն Հայաստանում գործող ստանդարտներին:

#### **Ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարումը շինհրապարակ**

Ջրի և էլեկտրաէներգիայի մատակարարումը կազմակերպում է կապալառուն: Կապալառուն պետք է ծանոթանա տարածքի չոր և անձրևային սեզոնների օրացույցին: Կապալառուն պետք է կազմի գրաֆիկ և կազմակերպի աշխատանքները այնպես, որ շինարարական աշխատանքները չխանգարեն խմելու ջրի մատակարարման պրոցեսին:

#### **Նյութերի և միջոցների Տեստավորումը**

Պատվիրատուն կարող է ստուգել և պահանջել ցանկացած նյութի կամ միջոցի տեստավորում, որոնք պետք է կիրառվեն շինարարական աշխատանքների մեջ: Կապալառուն այդ նպատակի իրականացման համար ցանկացած ժամանակ պետք է ապահովի Պատվիրատուի մուտքը իր և ենթակապալարուի շինություններ:

Այն դեպքում, եթե Պատվիրատուը չի ստուգում նյութերը և միջոցները պատրաստման վայրում, կապալառուն պետք է ստանա իր մատակարարողից տեստավորման սերտիֆիկատ և ներկայացնի Պատվիրատուին տվյալ սերտիֆիկատի պատճեն: Այդպիսի սերտիֆիկատներում պետք է նշվեն, նյութերի և միջոցների տեստավորման արդյունքների մասին համաձայն մասնագրերի և նորմաների:

Եթե Պատվիրատուն որևէ նյութ որակազրկում է (ոչ ճիշտ է տեղադրված, վնասված է եղանակի ազդեցությունից, չի համապատասխանում մասնագրերի պահանջներին), ապա այդ նյութը անմիջապես հեռացվում է շինհրապարակից և կապալառուին չի վճարվում նյութի մատակարարման, փոխման, պահպանման կամ տեղափոխման հետ կապված ծախսերը:

#### **Հիգիենայի պահանջների ապահովում**

Կապալառուն համաձայն Հայաստանի օրենքների, օբյեկտում ապահովում է սանիտարական պայմաններ և առաջին բուժօգնության հնարավորություն աշխատողներին համար:

#### **Հակահրդեհային անվտանգություն**

Կապալառուն պետք է կառուցի և սարքավորի հրդեհային հսկիչ կետերը, ապահովի հակահրդեհային միջոցների պիտանելիությունը, դրանց հասանելիության պայմանների ստեղծումը, շենքերի և շինհրապարակների գույքի անվտանգության համար:

#### **Լուսավորություն և Ցանկապատում**

Կապալառուն տեղադրում և սպասարկում է շինհրապարակի լուսավորության համակարգը, կառուցում և պահպանում է շինարարության գոտու ժամանակավոր ցանկապատումը: Կապալառուն ցանկապատումը կատարում է այնպես, որ կենդանին՝ մուտք չունենան շինարարական գոտի, բնակատեղի և այլն: Կապալառուն պարբերաբար ստուգում է ցանկապատը և անմիջապես վերացնում առաջացած ռեֆլեկտները: Ժամանակավոր ցանկապատը մնում է մինչև աշխատանքների ավարտը:

#### **Շինհրապարակի մաքրում**

Վերջացնելով աշխատանքը, մինչև օբյեկտի վերջնական ընդունումը, կապալառուն պատվիրատուի կողմից, կապալառուն շինհրապարակից մաքրում և հեռացնում է շինարարական թափոնը, չօգտագործված նյութերը, հավաքում և տեղափոխում սարքավորումները:





### Գոյություն ունեցող կառուցվածքների վնասումը

Կապալառուն իրավունք չունի վնաս հասցնել գոյություն ունեցող կառուցվածքներին, անկախ նրանից, թե դրանք պատվիրատուի կամ ինչ-որ երրորդ կողմի սեփականություն են հանդիսանում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ վնասվածքների անհրաժեշտությունը համաձայնեցված է և հանդիսանում է կատարվող աշխատանքների մաս:

Կապալառուն աշխատանքները պետք է կատարի այնպես, որ գոյություն ունեցող այլ նթակառուցվածքները որոնք գտնվում են շինհրապարակի մետակայքում, չվնասվեն անգամ եթե դրանք ցույց տրված չեն աշխատանքային գծագրերում:

Կապալառուն պատասխանատվություն է կրում կորուստի, վնասնաճքների համար և իր հաշվին պետք է կատարի անհրաժեշտ աշխատանքները՝ դրանք վերացնելու համար:

### Օգտագործված նյութերի շահագործման նվազագույն երաշխիքային ժամկետները

Նյութի կամ կոնստրուկցիայի անվանումը	Մերտիֆիկատի անհրաժեշտությունը	Երաշխիքային նվազագույն ժամկետ, տարի
Բետոն	Այո	40
Ավազ	այո	20
Խիճ	այո	30
Ե/Բետոն	այո	40
Պողպատե խողովակ և ձևավոր մասեր	այո	25
Պոլիէթիլենե խողովակաշար և ձևավոր մասեր	այո	50
Հավաքովի ե/բ դիտահորեր	այո	40
Փականեր, կափույրներ և այլ սարքավորումներ	այո	15

### Օբյեկտի աշխատանքների իրականացման համար պահանջվող մեքենաներ և սարքավորումներ

Մեքենաների և մեխանիզմների անվանումը	Մակնիշը և տիպը	Քանակը, հատ
Ավտոինքնաթափ	Բեռնատար մինչև 10տ	2
Էքսկավատոր հակադարձ բահ 0,5մ3 հիդրոմուրճով	Կահավորված նաև գրեյֆերի շերտիով	1
Ավտո ամբարձիչ	5տ	1
Բուլդոզեր		
Ձեռքի պնևմատոփիչ	50 կգ	2
Ձեռքի վիբրատոր	խորքային	2
Եռակցման ապարատ պոլիէթիլենի համար	-	1
Եռակցման ապարատ պողպատի համար	-	1
Բետոնախառնիչ	մինչև 0.1մ3	1
Այլ սարքավորումներ և աշխատանքային գործիքներ համակարգի մոնտաժման և փորձարկման համար	-	-



### **Ծածկված աշխատանքների ընդունումը**

Ոռոգման համակարգի կառուցման ժամանակ ծածկված աշխատանքների ակտերի կազմում ու ընդունման են ենթակա հետևյալ աշխատանքները.

- հիմնատակերի պատրաստումը,
- Նախապատրաստական շերտի կառուցումը,
- Ամրանային աշխատանքները,
- խողովակների հակակորոզիոն պաշտպանությունը,
- հետլիցքը տոփանումով:

### **Շինարարական աշխատանքների կազմակերպման օրացուցային գրաֆիկ**

Օբյեկտի շինարարության տևողությունը որոշվել է СНиП 1.04.03-85 «Շենքերի և շինությունների շինարարության տևողության նորմերի» համաձայն:

Շինարարության տևողության նորման ընդգրկում է ներհրապարակային նախապատրաստական աշխատանքների սկսման օրվանից մինչև օբյեկտի շահագործման հանձնման օրը: Շինարարության իրականացման համար նախատեսվում է մեկ բանվորական կոմպլեքս բրիգադա և անհրաժեշտ մեքենա-մեխանիզներ:

Ե/բ 50մ3 ծավալով ռեզերվուարի, պողպատե 57մմ և 100մմ տրամագծերով 335մ ընդհանուր երկարության ջրագծերի կառուցման և գործող խողովակաշարերի վերանորոգման տևողությունը կազմում է 3 ամիս:

### **Շինարարական աշխատանքների որակի հսկողությունը**

Շինարարության տեխնիկական որակի հսկողությունը-միջոցառումների համալիր է, որն իրականացվում է շին-մոնտաժային աշխատանքների կատարման բոլոր փուլերում և ուղղված է պարզելու իրականացվող աշխատանքների համապատասխանությունը որակի ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև կանխելու անորակ շինարարության իրականացումը: Որակի հսկողությունն իրականացվում է՝

1. հսկողական ստուգումներ
2. հսկողական չափագրումներ
3. աշխատանքների նախագծային ծավալների ստուգումներ
4. փորձարկումներ:

Որակի տեխնիկական հսկողությունն իրականացնելիս անհրաժեշտ է շինարարության ընթացքում ապահովել գեոդեզիական սպասարկում և չափագրություններ, պարբերաբար ստուգել բոլոր կատարած շին-մոնտաժային աշխատանքների որակն ու տեխնոլոգիական հերթականությունը, նրանց համապատասխանությունը նախագծին, շինարարական նորմերին և կանոններին, հատուկ աշխատանքների տեխնիկական պայմաններին, ստուգելով շինարարությունում օգտագործվող նյութերի, շինվածքների, կոնստրուկցիաների և բնօրինական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատների, տեխնիկական անձնագրերի և լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքների գոյությունը: Նախագծի ու արտադրանքի որակի պահանջներին անհամապատասխանության դեպքում արգելել դրանց օգտագործումը և արգելքը ձևակերպել համապատասխան ակտերով:

### **Ծավալաթերթ**

Ծավալաթերթում բոլոր հիմնական և օժանդակ նյութերի արժեքները, որոնք նշված չեն առանձին տողերով (կամ նշված չեն, որ գոյություն ունեցող են) ներառված են համապատասխան տեղադրման /մոնտաժման/ տողերում:



Շինարարական աշխատանքները իրականացվելու են դրական ջերմաստիճանի պայմաններում: Կապալառուն աշխատանքների միավոր արժեքը որոշելու ժամանակ պետք է հաշվի առնի բոլոր բարդությունները, լրացուցիչ աշխատանքները և հավելանյութերը (բետոնի և ցեմենտե շաղախների համար) և ընդգրկի համապատասխան աշխատանքների միավոր արժեքի մեջ:

#### **Լուսանկարներ**

Կապալառուն ապահովում է լուսանկարչական ալբոմներով:

Կապալառուն ներկայացնում է աշխատանքների ընթացքի, ծածկված և ավարտված աշխատանքների լուսանկարների օրինակները և նեգատիվները՝ թվագրված և վերնագրված՝ 100x120 ոչ պակաս չափերի: Լուսանկարները ներակայցվում են էլեկտրոնային տարբերակով: Առանց պատվիրատուի գրավոր թույլտվության լուսանկարները չեն ներկայացվում այլ անձանց:

#### **Աշխատանքների անվտանգության տեխնիկան**

Շինարարական աշխատանքները պետք է կազմակերպել խիստ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոնները համաձայն ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկա շինարարությունում»:

Համայնքների տարածքում կամ համայնքի արվարձանում, ինչպես նաև բանուկ ճանապարհների երկայնքով գտնվող շինարարական հրապարակում՝

- Պոտենցիալ վտանգավոր զոնայում գտնվող վերակառուցվող հատվածի շինհրապարակը պետք է մեկուսացվի ազդանշանային պարսպող ցանկապատով համաձայն ԳՈՍՏ 23407-85:
- Շինհրապարակը պետք է լուսավորվի: Լուսավորությունը պետք է լինի համաչափ, առանց կուրացնող ազդեցության: Ոչ լուսավորված տարածքներում աշխատանքների կատարումը արգելվում է:
- Օբյեկտը պետք է համալրված լինի հրդեհաշիջման համակարգով:
- Կրակային աշխատանքների կատարման դեպքում արգելվում է աշխատել անսարքություն ունեցող սարքավորումներով:
- Գազով բալոնները պահման, տեղափոխման և շահագործման ժամանակ պետք է պաշտպանվեն արևի ճառագայթներից և այլ ջերմային աղբյուրներից:
- Թույլ չտալ թթվածնով բալոնների, ճնշման կարգավորիչների և եռակցման սարքավորումների հպումը տարբեր յուղերի և յուղային հագուստի հետ:
- Առանց մեկուսացման կամ վնասված մեկուսացումով էլեկտրալարերի, ոչ ստանդարտ էլեկտրաապահովիչների օգտագործումը չի թույլատրվում:
- Էլեկտրաեռակցման հաղորդալարերը պետք է միացվեն մամլման, եռակցման կամ հատուկ սեղմակների միջոցով:
- Աշխատելու ժամանակ էլեկտրաեռակցման սարքավորումները պետք է լինեն հողանցված:
- Վնասակար կամ պայթյունավտանգ լուծիչներ պարունակող նյութերը պետք է պահվեն հերմետիկ փակ տարայի մեջ:
- Գործարկված շարժիչով մեքենաները և տրանսպորտային միջոցները առանց վերահսկողության թողնելն արգելվում է:
- Մոնտաժման գոտու սահմանագծերին պետք է տեղադրվեն անվտանգության նշաններ:

Շինադրի և թափոնների տեղափոխման ժամանակ ավտոինքնաթափի թափքը պետք է ծածկված լինի պոլիէթիլենային թաղանթով, որը կաշտպանի շինադրի թափումը և համայնքի փողոցների և համայնքից դուրս ճանապարհների աղտոտումը:

Համաձայն գործող անվտանգության նորմատիվ պահանջների՝ աշխատողները պետք է ապահովվեն անհատական պաշտպանիչ միջոցներով, ելնելով տվյալ աշխատանքների կատարման վնասակարության և վտանգավորության աստիճանից:

#### **Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված միջոցառումներ**

Ծիլքարի խմելու ջրի համակարգի աշխատանքների իրականացման արդյունքում գործունեության համար ընտրված տարածքներում լանդշաֆտի, բուսական ու կենդանական աշխարհի վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Հնարավոր բացասական ազդեցությունների առաջացումը հիմնականում պայմանավորված կլինի շինարարական աշխատանքների իրականացմամբ: Այդ ազդեցությունները կլինեն փոքրածավալ և կկրեն ժամանակավոր բնույթ: Բացասական ազդեցությունները կանխարգելելու կամ նվազեցնելու նպատակով մշակվել են մեղմացնող միջոցառումներ:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ակնկալվում են հետևյալ բացասական ազդեցությունները.

- օդի աղտոտում,
- աղմուկ,
- երթևեկելի ու հետիոտն ճանապարհների խաթարում և ծանրաբեռնվածություն,
- հողի էրոզիա և հողատարման պրոցեսներ,
- շրջակա միջավայրի աղտոտում շինարարական և կենցաղային աղբով,
- հողային և ջրային ռեսուրսների աղտոտում վառելանյութով և քսայուղերով,

Ենթաձրագրի իրականացումը կունենա դրական սոցիալական արդյունքներ: Ան անմիջականորեն կբարելավի ծրագրում ընդգրկված համայնքի բնակչության կյանքի որակը: Բոլոր անհրաժեշտ միջոցները կապված արտաքին միջավայրի պահպանության հետ, պետք է իրականացվեն Կապալառուի կողմից, այդ թվում՝

- ժամանակավոր օգտագործված հասարակական և մասնավոր հողերի վերականգնում,
- նախազգուշական միջոցներ կապված ջրային օբյեկտների աղտոտման կանխման հետ,
- ծառերի և բույսերի պահպանություն,
- բոլոր օգտագործվող նյութերի ճիշտ տեղադրում,
- շինհրապարակի անհրաժեշտ մաքրում և կարգավորում,
- սանիտարական միջոցառումներ,
- վնասակար ազդեցության նվազեցում:

Կապալառուն պարտավոր է ապահովել թափոնների և շինարարական հեռացումը աղբավայր: Թափոնների թաղումը չպետք է նպաստի ստորգետնյա ջրերի աղտոտմանը:

Կապալառուն պարտավոր է նախատեսել միջոցառումներ, կապված շինարարական փոշուց օդի աղտոտման նվազեցման հետ:

Կապալառուի օժանդակ կառուցվածքները՝ և, պահեստային հրապարակները պետք է տեղակայված լինեն, հնարավորին չափով, շինհրապարակի սահմաններում:

Աշխատանքները պետք է կատարվեն այնպես, որպեսզի կանխվի արտաքին միջավայրի քայքայումը և մաքսիմալ պահպանվի բնական լանդշաֆտը: Արտաքին միջավայրը՝ հանքերը, մշակվող տարածքները, անտառները, թփուտները պետք է պաշտպանվեն Կապալառուի ոչ բարենպաստ քայքայիչ գործողություններից:






Ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքներին համայնքի մասնակցության դեպքում հնարավորինս կնվազեցվեն շինարարական աշխատանքների արդյունքում պատճառված անհանգստությունները



## ՀԱՎԵԼՎԱԾ 1

## Ելակետային տվյալներ և հաստատումներ

## «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՉՅԱՆՆԵՐ» Ս Պ Ը



### Ի Ն Ժ Ե Ն Ե Ր Ա Ե Ր Կ Ր Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՌԻՆԴ  
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ 50 ՄՅ ՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ՌԵԶԵՐՎՈՒԱՐԻ, ԵՐԿՈՒ  
ԿԱՊՏԱԺՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆՍ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՄԱՍՆԱԿԻ  
ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Լիցենզիա ՔՊԼ 000804, 1-ին դաս

Տնօրեն՝



Հ. Տիտիչյան

Երևան 2025թ





## Բացատրական մաս

Համաձայն «ԲԻՄ ԻՆՃԵՆԵՐԻՆԳ» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագրի և համապատասխան առաջադրանքի 2025 թվականի հոկտեմբեր ամսին կատարվել են ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի խոշորացված համայնքի Ռինդ բնակավայրում 50 մ<sup>3</sup> տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտածների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգման աշխատանքների համար: Աշխատանքների իրականացման նպատակն է համաձայն Հայաստանի Հանրապետության նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերի՝ ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի խոշորացված համայնքի Ռինդ բնակավայրում 50 մ<sup>3</sup> տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտածների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգման աշխատանքների նախագծային փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ երկրաբանական տվյալների հավաքագրումը և համապատասխան հաշվետվության կազմումը: Վերը շարադրված խնդիրը լիարժեք լուծելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները. ուսումնասիրվել է տվյալ տարածքի երկրաբանական կառուցվածքը առկա մերկացումների տվյալների, տեղագնության, ակնադիտարկման եղանակով, ինչպես նաև հարակից տարածքներում մեր կողմից կատարված ինժեներաերկրաբանական հետազոտումների տվյալների համադրմամբ և վերլուծությամբ:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեոմորֆոլոգիական տեսակետից Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Վարդենիսի լեռնաշղթայի Արփայի հովիտը իջնող լեզվակաձև տարավանդի վրա՝ ծովի մակերևույթից 1320 մ բարձրության վրա: Մարզկենտրոն Եղեգնաձոր քաղաքից գտնվում է 25 կմ դեպի արևմուտք:




Երկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տարածքի կտրվածքներում մասնակցում են միջին էոցենի (Pg<sup>2</sup>) հասակի հրաբխանստվածքային շերտեր՝ պորֆիրիտները, անդեզիտները, ավազաքարերը: Մեր ուսումնասիրվող տարածքում հանդես են գալիս վերը նշված ապարների հողմնահարված գոտին մանրախճային և խոշորաբեկորային նստվածքների տեսքով:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արենի համայնքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքը գտնվում է «տաք» կլիմայական շրջանում: Բնորոշ է շոգ ամառը, չափավոր ցուրտ ձմեռը:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Արենի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

- Տարեկան միջին ջերմաստիճանը 12.3 °C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 42°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -24°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 59%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենացուրտ ամսվա 60%
- Օդի հարաբերական խոնավությունը ամենաշոգ ամսվա 34%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 470-550մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.3մ/վ:
- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, կազմում է 21սանտիմետր:



Նկ. 3. Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

**Հիդրոերկրաբանական տեսակետից** Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող շրջանում տարածված գրունտային ջրերը կապվում են ձեղքային և ծակոտկենային տիպի ծագման և ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքների գրունտային ջրերի հետ: Գրունտային ջրերի հոսքեր, հիմնականում հանդիպում են ժամանակավոր հոսքերի տեսքով, ձորակների և գետի հովտում (ցածրադիր տարածքներում): Ուսումնասիրվող տարածքում գրունտային ջրերը կապված են գետի հունի հետ, ընդ որում դրանք գտնվում են մոտ 10մ խորությունների վրա՝ կախված սեզոնից:


**Տիգիկաերկրաբանական** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարսերը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն բացակայում են:



## Շրջանի սեյսմիկ և սեյսմատեկտոնական պայմանները

Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ -20.04.2020թ.-ի, տեղագնվող շրջանը գտնվում է

II սեյսմիկ գոտում՝ գրունտների  $A_{max} = 0.4g$  արագացմամբ:



## Երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Տարածքի երկրաբանական կտրվածքը ուսումնասիրվել է ակնադիտական եղանակով, բացված շուրֆերի միջոցով, բնական մերկացումների և արխիվային նյութերի հիման վրա: Ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է գրունտների 4 շերտեր: Ստորև բերվում է այդ շերտերի լիթոլոգիական նկարագրությունները և նրանց ֆիզիկա-մեխանիկական հատկությունները.

**Շերտ 1** Կավավազ, խճակոպճային խառնուրդով մինչև 15%

Շերտի հզորությունը 0.0-0.2մ

Սեյսմիկ կարգը III

Մշակման խումբը 9ա - I կարգ

**Շերտ 2** ավազակավեր պինդ թանձրության խճի, մանրախճի պարունակությամբ: Ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ-պրոլուվիալ նստվածքներ են :

Շերտի հզորությունը 0.2 – 1.5 III կարգ է

Տեսակարար կշիռը 2.71-2.73գ/սմ<sup>2</sup>

Ծավալային կշիռը 1.90-1.95գ/սմ<sup>2</sup>

Ներքին շփման անկյուն 17-190

Դեֆորմացիայի մոդուլը 17.4ՄՊա

Թույլատրելի լարումը մինչև 2.0կգ/սմ<sup>2</sup>

Բնահողի սեյսմիկ կարգը III կարգ

Շինարարական մշակման խումբը 33գ III կարգ

## Շերտ 3

Մանրաճալաքարա-կոպճային նստվածքներ 25-35% խճավազա- կավավազային լցանյութով:

Ընգրկում է ուղեգծի 27%

Շերտի հզորությունը 0.0-1.0մ և ավելի

Տեսակարար կշիռը 2.68 գ/սմ<sup>3</sup>

Ծավալային կշիռը 1.61 գ/սմ<sup>3</sup>





Ներքին շփման անկյունը 240

Դեֆորմացիայի մոդուլը 160-180 կգ/սմ<sup>2</sup>

Թույլատրելի լարումը 2.2 կգ/սմ<sup>2</sup>

Բնահողերի սեյսմիկ կարգը II

Շինարարական մշակման խումբը 96 - IV կարգ

**Շերտ 4** հրաբխային ապարների խճաքարային նստվածքներ, 7-10 % բեկորանյութով, 10-15% ալագակավային լցանյութով: Ժամանակակից դելտավիալ-պրոլուվիալ նստվածքներ են

Շերտի հզորությունը 1.5 - 4.0

Տեսակարար կշիռը 2.66-2.68գ/սմ<sup>2</sup>

Ծավալային կշիռը 1.90-2.00գ/սմ<sup>2</sup>

Ներքին շփման անկյուն 30-330

Կապակցվածությունը- 0.05կգ/սմ<sup>2</sup>

Դեֆորմացիայի մոդուլը 35.4ՄՊա

Թույլատրելի լարումը մինչև 4.0 կգ/սմ<sup>2</sup>

Բնահողի սեյսմիկ կարգը II կարգ

Շինարարական մշակման խումբը 12 V կարգ

**Շերտ 5 Ավազաքարեր տուֆոավազներ**, մանրաբեկոր նստվածքային ապարներ՝ Վերին Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային ցեմենտով կապակցված:

Շերտի հզորությունը 0.1-1.0 մ

Տեսակարար կշիռը 2.68-2.80գ/սմ<sup>2</sup>

Ծավալային կշիռը 2.20-2.40գ/սմ<sup>2</sup>

Ներքին շփման անկյուն 45-500

Դեֆորմացիայի մոդուլը 56.0ՄՊա

Թույլատրելի լարումը մինչև 5.0կգ/սմ<sup>2</sup>

Բնահողի սեյսմիկ կարգը II կարգ



**Ջրագիծ Ջ-1**

ՆԿ0+00 – ՆԿ 1+42

0.0 – 0.2մ Կավավազ, խճակոպճային խառնուրդով,

0.20-1.0մ- հրաբխային ապարների խճաքարային նստվածքներ, 7-10 % բեկորանյութով,

10-15% ավազակավային լցանյութով: Ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ  
նստվածքներ են:

ՆԿ1+42 – ՆԿ 2+55

0.0 – 0 1մ Կավավազ, խճակոպճային խառնուրդով,

0.1-1.0- **Ավազաքարեր տուֆոավազներ**, մանրաբեկոր նստվածքային ապարներ՝ Վերին  
Յուրայի հասակի, խայտաբղետ գունավորմամբ, միջին ամրության, կավային  
ցեմենտով կապակցված:

**Ջրագիծ W-1 , Ռեզերվուար**

ՆԿ0+00 – ՆԿ 0+80

0.0 – 0.2- Կավավազ, խճակոպճային խառնուրդով

0.2 – 1.5 ավազակավեր պինդ թանձրության խճի, մանրախճի պարունակությամբ:  
Ժամանակակից էյուվիալ-դեյուվիալ-պրոյուվիալ նստվածքներ են :

1.5 - 4.0- հրաբխային ապարների խճաքարային նստվածքներ, 7-10 % բեկորանյութով,  
10-15% ավազակավային լցանյութով: Ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ  
նստվածքներ են:





*ՀՀ Վայոց ձորի մարզի Արենի խոշորացված համայնքի Ռինդ բնակավայրում 50 մ<sup>3</sup> տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտածների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգման աշխատանքների ինժեներակրթաբանական ուսումնասիրությունների հաշվետվության եզրակացություն:*

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

• Ուսումնասիրվող տարածքում ըստ բացված երկրաբանական կառուցվածքը ներկայացված է գրունտների 5 շերտով, որոնք ըստ ֆոնդային տվյալների ունեն բավարար ֆիզիկամեխանական հատկությունները:

• Տեղամասում ստորերկրյա ջրեր չեն հայտնաբերվել և ըստ ֆոնդային տվյալների գտնվում են 10-1-ից խորը հատվածքներում:

• Համաձայն 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝  $A_{max}=0,4g$ :

• Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ 22.01.24 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 50 սանտիմետր:

• Ֆիզիկա-երկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ տվյալ տարածքում բացակայում են

• Ինժեներակրթաբանական և հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Երկրաբան՝



Հ. Տիսիգյան





# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀՇՆ 22.01.24 «Շինարարական կլիմայաբանություն
2. ՀՀ կառավարության որոշում N 1530-Ն առ 04.09.2003 թ. Ինժեներաերկրաբանական հետազնությունների նյութերի փորձաքննության Կարգը
3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի N 103-Ն հրաման ՀՀՇՆ 40-01.02-2020 «Ջրամատակարարում. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ»
4. ԳՕՍՍ 5180-2015 Բնահողեր. Ֆիզիկական բնութագրերի լաբորատոր որոշման մեթոդներ.
5. ԳՕՍՍ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում:
6. ՀՀՇՆ 20.04.2020 Երկրաշարժադիմացկուն շինարարություն
7. ԳՕՍՍ 58325-2018 (Հողեր. Դաշտի նկարագրություն(հետազոտության) ,
8. ԳՕՍՍ 25100-2020 Բնահողեր. Դասակարգում.
















1486241

ደግረ-000804, 1-ክስ ጥላላ

*Urtica dioica*, *Urtica dioica*, *Urtica dioica*

ՔԱՂԱՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԱԿՆԵՐԻ ՀԵՏԱԽՈԶՄԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՆԱՄԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՈՒՑՈՒՄ

There is nothing to be done but to wait.

7 ग्रन्थः

2024-09-13, «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՏԻՏԻՉԱՆՆԵՐ» ՍՊԸ

23. August 1941, 14.00 Uhr, 1. Sitzung

ՀՀ. ԵՐԵՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ, ԱՎԱՆ, ԲՐՅՈՒՍՈՎ, 62 Շ., 31 ԲՆ.

Ամենի ցրտիմաքսից և խոշորից անտառի մեջ անցնելով լեռնի վրա, Ամենի անտառը

Գործողության ժամկետը՝ 13.09.2029թ.

(corr. author, manuscript)



UG3D-B197-32E6-5B48

ՀԱՅԿԻՆՔ ՀԱՄԱՐ՝ UCSD-BI97-3216-5948

Ստի՛վ, վստահությունը տրված է՝ բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի գաղտնիությունն ստորագրում եմ՝  
 լիզենզիայի պայմաններում օգտագործելու համար: Հայտարարելով <https://verify.e-gov.am> հայտարարելով հավանական  
 էլեկտրոնային փաստաթղթի վավերականության ստուգման միջանակն համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ  
 պատճենը կամ օրենսդիրներով սրտա՝ արձագանքման ծածկագիրը (QR Code):



Համար	Տվյալներ	Դրույթի համար	Կատարման տարեթիվ
1	ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾԱՌԱՅԻՄԱՆ ԱՇԽԱՏԱԾԱՆԿԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԻ ՎԵՐԱԾԱՌԱՅԻՄԱՆ ԲԵՐՈՒՄԸ	000921	2024-08-01
2	ՍՍՍԿԼԷՆ ԶԱՅՐԱՑԱՆ	003190	2024-11-18



UG42-E24B-65E5-F9FD

ՀԱՎԻՉ ՀԱՍՈՒՄ՝ UG42-E24B-65E5-F9D  
Սույն փաստաթուղթը արված է բացառապես էլեկտրասնային երանգավոր, ֆաբրիկայի կազմակերպության ստորգրում ու  
էլեկտրասնային բնութագրի վերաբերյալ հիմնարկում է կրկնապատկել <https://verify.e-gov.am> Հայաստանի Հանրապետության  
էլեկտրոնային փաստաթղթերի կազմակերպության ստորագրած միասնական հաշվապահի կայքում մուտքագրելով հսկիչ,  
իմաստը կամ սրճանակներով արագ արձագանքման ծանուցիչը (QR Code):



ՀՀ Առողջապահության նախարարություն	Հաստատված է ՀՀ առողջապահության նախարարի «_04_»_10_2012թ. թիվ_2252-Ա_հրամանով
Հետազոտություն և առարող կազմակերպության անվանումը - ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Դեֆերենս լաբորատոր կենտրոն» մասնաճյուղ	

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 175

16.10.2025թ.

Կազմակերպության անվանումը, հասցեն «Արենի» ՀՈԱԿ ՀՀ Վայոց Ձորի մարզ, Արենի համայնք:

Լաբորատոր-գործիքային հետազոտությունների անցկացման հիմքը 06.10.2025թ. ճառալուծությունների վճարովի մատուցման պայմանագիր N° 12-108

Հրաման, հանձնարարագիր, կարգադրագիր, գրություն և այլն, համարը, ամսաթիվը

Փորձաքննության ենթակա փաստաթղթերի ցանկ. 14.10.2025թ. Խմելու ջրի նմուշի մանրէաբանական N°152 փորձարկման արձանագրությունը 16.10.2025թ. Խմելու ջրի քիմիական և ճառագայթաբանական հետազոտության N°981/251; 202; 230 փորձարկման արձանագրությունը: 16.10.2025թ. Խմելու ջրի քիմիական և ճառագայթաբանական հետազոտության N°981/202 փորձարկման արձանագրությունը:

Նշել լաբորատոր-գործիքային հետազոտությունների արձանագրությունների անվանումը, համարը, ամսաթիվը

Եզրակացություն սանիտարական նորմերին և հիգիենիկ նորմատիվներին համապատասխանության վերաբերյալ 09.10.2025թ. Վայոց Ձորի մարզ, Արենի համայնքի, Ռինդ բնակավայրի «Գուսանի» ջրաղբյուրից վերցված խմելու ջրի նմուշը, ըստ հետազոտված քիմիական և ճառագայթաբանական ցուցանիշների համապատասխանում է ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 25-ի N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ: Որակի հսկողություն» N 2-III-Ա2-1 սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին:

Խմելու ջրի նմուշի մանրէաբանական հետազոտության արդյունքում մանրէների ընդհանուր թիվը կազմել է 60, 100մլ-ում խմելու ջրում ընդհանուր կոլիֆորմ մանրէների



քանակը կազմել է ԱՀԲ=24: Արդյունքը չի համապատասխանում ՀՀ առողջապահության նախարարի 25 դեկտեմբերի 2002թ. N 876 հրամանով հաստատված «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի խմելու ջրի որակին ներկայացվող պահանջներ: Որակի հսկողություն» N2-III-U2-1 սանիտարական նորմերի և կանոնների 3.2 կետի պահանջներին:

Ներկայացվում է ըստ յուրաքանչյուր լաբորատոր գործիքային հետազոտության արձանագրության: Սանիտարական նորմերից և հիգիենիկ նորմատիվներից շեղումների առկայության դեպքում նշվում է հետազոտության արդյունքը թվային արժեքով և այն սանիտարական նորմի և հիգիենիկ նորմատիվի անվանումը և կետը, որի պահանջները խախտվել են:

ԱՆ «ՀՎԿԱԿ» ՊՈԱԿ-ի «Ռեֆերենս» լաբորատոր կենտրոն»

Վասնաճյուղի տնօրեն

Ավարդ Ավանեսյան

Եզրակացություն տվող պաշտոնատար անձի (անձանց), պաշտոնը, ակուն ազգանունը, ստորագրությունը:

Բժիշկ հիգիենիստ

Գրիգորի Գևորգյան

Փորձագրական եզրակացության համար հիմք հանդիսացած լաբորատոր-գործիքային հետազոտությունների արձանագրությունները կցվում են սույն եզրակացությանը և կազմում են դրա անբաժանելի մասը: Սույն եզրակացությունը անվավեր է առանց դրա համար հիմք հանդիսացած լաբորատոր-գործիքային հետազոտությունների արձանագրությունների:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք,  
ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի 15 փ., 2 փկղ., 2/6, Հեռ. 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

N 3526-25

14 նոյեմբեր 2025 թ.

**Տեղեկանք**

Տրվում է «ԲԻՄ Ինժեներինգ» ՍՊ ընկերությանը առ այն, որ (Պատվիրատու – Արենի համայնքապետարան, նախագծային ընկերություն - «ԲԻՄ Ինժեներինգ» ՍՊԸ, պայմանագիր «ԱՐԵՆԻ Հ-ԳՀԽԾՁԲ-03/25») Արենի համայնքի Ռինդ բնակավայրում 50 մ<sup>3</sup> տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտաժների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգման աշխատանքներ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմելիս նախատեսել, որ.

- Ետլիցքի համար անհրաժեշտ փափուկ գրունտը կարելի է բերել 1կմ հեռավորությունից:
- Շինարարության ժամանակ առաջացած շինադբը կարելի է տեղափոխել աղբավայր, որը գտնվում է 4կմ հեռավորության վրա:
- Գրունտի ժամանակավոր թափոնավայրը գտնվում է 1 կմ հեռավորության վրա:

Տրվում է ներկայացնելու պահանջվող վայրը:

1 Համայնքի ղեկավար



ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ  
ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Արենի համայնք,  
ՀՀ Վայոց ձորի մարզ, գ. Արենի 15 փ., 2 փկղ., 2. 6, Հեռ. 0281-6-00-01, areni.vayotsdzor@mta.gov.am

N 3525-25

14 նոյեմբեր 2025 թ.

**Տեղեկանք**

Տրվում է «ԲԻՄ Ինժեներինգ» ՍՊ ընկերությանը առ այն, որ (Պատվիրատու – Արենիի համայնքապետարան, նախագծային ընկերություն-«ԲԻՄ Ինժեներինգ» ՍՊԸ, պայմանագիր «ԱՐԵՆԻ-ԳՀԽԾԲ-03/25») Արենի համայնքի Ռինդ բնակավայրում 50 մ³ տարողությամբ ռեզերվուարի, երկու կապտաժների կառուցում և խմելու ջրի արտաքին ցանցի մասնակի վերանորոգման աշխատանքներ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմելիս հաշվի առնել որ համայնքապետարանը համայնքի բնակիչ հանդիսացող հողամասերի սեփականատերերի հետ ձեռք է բերել համաձայնություն նրանց պատկանող հողատարածքն չլինելու սույն ծրագրի շրջանակներում իրականացնել շինարարական աշխատանքներ:

Տրվում է ներկայացնելու պահանջվող վայրը

Համայնքի ղեկավար 

ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ



04. 11. 2025թ.



**Թերությունների ակտ N 01/02**

Կազմված է սույն ակտը առ այն, որ (Պարավիրաբու - Արեւիկայի համայնքապետարան, նախագծային ընկերություն - ԲԻՄ Ինժեներինգ ՍՊԸ, պայմանագիր ԱՐԵՆԻՀ-ԳՀԽԾՁԲ-03/25) պայմանագրի շրջանակներում աշխատանքային խումբը համաձայն ԳՕՍՏ 31937-2011 ուղումնասիրել է Ռինդ բնակավայրի ջրամատակարարման համակարգը, որի արդյունքում արձանագրվել է ջրամատակարարման նոր կառուցվածքների կառուցման անհրաժեշտությունը:

- Վերին ուլնոց ջրաղբյուրի մասին արխիվային փաստաթղթերը առկա են:
- Գոսան ջրաղբյուրի մասին արխիվային փաստաթղթերը բացակայում են:
- Իրականացվել է երկու ջրաղբյուրների ջրի լաբարատոր հետազոտություն:
- Գոսան ջրաղբյուրի ջրօգտագործման թույլտվությունը բացակայում է:
- Ջրաղբյուրները ստորգետնյա են որոնք սփռված են ձորի լանջում տարբեր տեղերում:
- Աղբյուրները գտնվում են համայնքի հատուկ պաշտպանության գոտում:
- Խողովակների վրա որոշ հատվածներում բացակայում է ջերմամեկուսիչ շերտը և առկա են վթարային հատվածներ
- Վերգետնյա խողովակաշարերի վրա բացակայում է հակակոռոզյոն մեկուսացումը:
- Վերգետնյա ջրագծերի որոշ հատվածներ ենթարկվել են կոռոզիայի, պատի մնացորդային հաստությունը մոտավոր կազմում է 0,5-2մմ:
- Վթարային ջրերի հոսքերից խողովակաշարին զուգահեռ առաջացել են խոր առվակներ և փոսեր, քանդելով դաշտամիջյան ճանապարհները և խոչընդոտելով ջրագծերի շահագործման:



04. 11. 2025թ

Արձանագրություն 01

Հաստատում եմ  
Արենի համայնքի ղեկավար  
Հ. Մահակյան

